



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


ՆՅԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Ա. Ի. ԿՐԱՍՆԻՑԿԻ

# ԱՐՑՈՒՆՔ

Եղան Թարգ. Օթ. Ա. Ս.

891.712  
4-93



Իրավունք տրվել է Արևի կողմէ Հայաստանի նախագահի կողմէ<sup>30 MAY 2011</sup>  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

891.71.5

Կ-93 Ա Տուիր ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ



4  
17

493  
427


## ԱՐՑՈՒՆՔ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԾՆՔԻՑ ՊԱՏՄՈՒԾՔ

(Պատկերներով)

129

Ազատ թարգ.  
Օր. Ա. Ա.



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՑԻԴ» ՏՊԱՐԱՆ  
1905.

224 MAY 21 1933

3888

5965



Զանգի սուր ձայնն ընդհատեց... կլասիքական գիմնազիօնի նախասենեակներում տիրող լռութիւնը։ Այդ ձայնն աւետեց ամենքին վաղուց սպասած ցանկալի բոսկէն—դասերի վերջանալը։ Միքանի բռպէ ել՝ և բոլոր ուսուցիչներն ու աշակերտները պիտի ցըսւէին իրանց տները։

Մեղանից ամեն ձեկը՝ ի՞նչ տեսակ դպրոցում  
էլ եղած լինի, կը հասկանայ այդ վայրկեանի բո-  
լոր բաղջըութիւնը:

Վերջին զանգակը աղատութիւն է աւետում.  
այդ բոսպէին բոլոր հոգաերն ու վրդովմունքները մո-  
ռացութեան է արևում. իւրաքանչիւր աշակերա-  
ցնծութեամբ շտապում է գետի տուն, որ ինչքան  
ել վաս վիճակում լինի, բայց և այնպէս նրա հա-  
մար զարձեալ գերադասելի է ամենալաւ զպրոցից:

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4

Աշակերտներն ուրախ աղմաւկով զուրս դալով  
գասարաններից՝ իրանց վերակացուների հրամա-  
նով զոյգ - զոյգ կանգնեցին ու զնացին հագնուելու:  
Ծառաները մտան գասարանները սրբելու:

Միայն Գ գասարանի աշակերտները, թուով  
37 հոգի, մնացին չարձակուած: Նրանք անշարժ  
նստած էին իրանց տեղերը: Նրանց մատաղ դէմ-  
քերի վրայ կարելի էր կարգալ թէ երկիւզ և թէ  
մի տեսակ օտարոտի տարակուսանք: Ամենքը լուռ  
էին. կարծես մի անսովոր, չնախատեսնուած բան  
փուլ գալով նրանց վրայ՝ ճնշում էր անբնական  
ծանրութեամբ: Մատաղ սերունդը անկարող էր  
իւր վրգովմունքը հսականալու և անսպասելի տպա-  
ւորութիւնը բննելու:

Ալսպիսի լարուած զրութեան մէջ բոպէներն  
անցնում էին բոպէների ետևից:

Դասարանի օրապահը, որ թէ ընկերների և  
թէ ուսուցիչների սիրելին էր, քար կտրած կան-  
գնած էր ամբիօնի մօս:

Վերջապէս գասարանը փոքր առ փոքր ուշըի  
եկաւ ամենքն էլ սթափուեցին ծանր ու ճնշող  
տպաւորութիւնից: Լսելի եղաւ նախ կամաց շըշն-  
շիւնը, ապա զապողական ծիծաղ. բայց հենց այդ-  
միջոցին օրապահը ծայն տուաւ:

— Լոռութիւն, պ. Բէլկովը գալիս է:

Բէլկովը նոյն գասարանի ուսուցիչն էր և իւրա-

տապահանց դաստիարակը: Նա աշակերտների մէջ  
երբէք խարութիւն չէր անում և հէնց այդ յատ-  
կութիւնն էր, որ նրան բարձրացնում էր իւր սա-  
նիկների աչքում: Թէպէտ նրան շտա էլ չէին սի-  
րում, բայց անկեղծօրէն յարգում էին և անպայ-  
ման հաւատում: Նրանից ոչ մի գաղտնիք չունէին,  
բոլոր իրանց արած չարութիւններն ու յան-  
ցանքները առանց քաշուելու խատովանւում էին:

Բէլկովը մտնելուն պէս՝ օրապահին հրամայեց  
գուռը փակել իսկ ինքը շտապ քայլերով բարձրա-  
ցաւ ամբիօն: Նրա դէմքը սասահիկ դժգոհութիւն  
էր արտայայտում:

Ուսուցչի աթոռը՝ ոտի մինը կոտրած ընկած  
էր ամբիօնի ետևը: Բէլկովը վերցրեց կոտրած ոտը  
և սկսեց ուշադրութեամբ զննել:

Նա պատահմամբ էր կոտրուած, այլ կարծես  
մէկը սղոցել էր ոտի ուղիղ մէշտեղը: Ուսուցիչը  
յետով վերցրեց աթոռը, լաւ նայեց. Նրա ենթա-  
դրութիւնը աւելի ևս հաստատուեց: Պարզ երեսում  
էր չար մտադրութեան հետևանքը. աթոռի ոոր կի-  
սից աւելի սղոցած էր եղել, որ չղիմանալով ծան-  
րութեան կոտրուել էր:

Բէլկովը յանդիմանօրէն շարժեց գլուխը և ծա-  
նը շունչ քաշեց:

— Երեխայք, դիմեց նա գասարանին, ձեղանից  
որի զորձն է այս յանդդնութիւնը:

Տիրեց լոռւթիւն։ Երեխաները չի մանալով թէ  
ի՞նչ պատասխանեն, շփոթուած ու տարակուասած  
լուս միմեանց էին նայում։

— Երեխայք, նորից հարցնում եմ, ձեղանից  
ով յանդգնեց այս չարութիւնն անել պ. Հովհանսէ-  
նին։ Զէ ո՞ր ձեղանից մէկը բարեբախտաբար աղատ-  
ուեց եղեռնադրծ լինելուց։ Պ. Հովհանսէնը, փառք  
Աստուծոյ, միայն վիրաւորուել է... և խիստ վի-  
րաւորուել, բայց կարող էր նաև աւելի վատ բան  
պատճեր, ամբիօնից ընկնելով՝ նա կարող էր մա-  
հացու վերք ստանալ... լաւ մտածեցէք այդ մա-  
սին. պ. Հովհանսէնը մի ժեր մարդ է, ամենաչնչին  
պատճառից էլ կարող էր մեռնել... նա ծեղ ի՞նչ է  
արել։ Ինչո՞ւ, ասացէք, ինչո՞ւ արիք այսպիսի բան։

Դասարանում դարձեալ լոռւթիւն տիրեց։

— Դուք լուս էք, զայրացաւ Բէլկովը, այդ  
ի՞նչ է նշանակում. անկասկած ձեր մէջ կայ մէկ  
անպիտան... Պարզ է որ աթոռը սղոցած է. դուք  
էլ շատ լաւ գիտէք, որ ինքն իրան չէր կարող պա-  
տահել. այդ արել է անպիտանի մէկը։ Ես չեմ ու-  
զում հաւատալ, որ ձեր ամենքիդ գիտութեամբ լի-  
նի արուած այս տղեղ արարքը։ Ահա երրորդ տա-  
րին է որ ձեր դաստիարակն եմ. Ֆիշա է՝ եղել են  
ձեր մէջ չարանճիներ, ծովեր, բայց անպիտաններ՝  
երբէք։ Միթէ ես սխալուած եմ։ Դէհ, զոնէ մի  
պատասխան տուէք։

— Պ. Բէլկով, վերջապէս խօսեց ամէնալաւ  
աշակերտներից մէկը. եթէ զիտենայինք թէ ով է  
յանցաւորը, մէնք ինքներս կրպատժէինք նրան։

Տղայի խօսելու ձևից երեսում էր նրա անկեղծ  
դժուհութիւնը։

— Անկարելի բան է, որ զգիտենաք, զայրացած  
գոռաց Բէլկովը. միայն թէ չէք ուղում անպիտա-  
նին մատնել։ Այս ըոպէիս տեսուչը կրգալ, բայց  
ես չզիտեմ թէ ի՞նչ ասեմ նրան։ Ուրեմն աւելի լաւ  
է որ յանցաւորն ինքը խոստովանուի։

— Ոչ, ոչ, հաւատացէք մենք չզիտենք... մենք  
սիրում ենք պ. Հովհանսէնին. նա այնպէս բարի  
է... եթէ մէնք զիտենայինք...

— Բայց ձեղանից մէկն ու մէկը պէտք է լի-  
նի յանցաւորը. միթէ նա այնքան բարոյական քա-  
շութիւն չունի, որ խոստովանուի իւր արարքը...  
Այդպիսի տղեղ վարմունքը ոչ միայն յիմարութիւն  
է, այլ և անվայել... Ահա տեսուչն ինքը։

Դուռը յանկարծ բացուեց և ներս մտաւ տե-  
սուչը, որի գէմքը սաստիկ բարկութիւն էր արտա-  
խյառում։

— Զե՞ն խոստովանուում, զիմեց նա դասակա-  
րակին։

— Թւում է, որ սրանք չզիտեն, շնչաց Բէլ-  
կովը։

Տեսուչը դառն միմաղեց։

— Զդիտե՞ն, ապա ով զիտէ, — մենք... Ամօթ  
ու խայտառակութիւն: Ասացէ՛ք, ով արաւ այդ բա-  
նը, զալրացած դիմեց նա աշակերտներին:

Լուռ էին ամենքը: Նրանք ահ ու զողով նա-  
յում էին միմեանց:

— Դուք չէ՞ք ուզում խոստովանուել, հարցրեց  
տեսուչը: Լաւ, ուրեմն ամբողջ գասարանը ամեն օր  
դասերից յետոյ երեք ժամ կըմնայ պատժուած և  
այդպէս կըշարունակուի, մինչև որ դանուի յանցա-  
ւորը: Իսկ հիմա լսեցէ՛ք, — ձեր զոհին պ. Հով-  
հանսէնին ուշաթափ տուն տարան. բժիշկն ասում  
է, որ նրա դրութիւնը երկիւղալի է... Գոհ էք, դէհ,  
ուրախացէ՛ք:

Այս ասելով տեսուչը դուրս եկաւ գասարանից,  
գուռը իւր ետեից ամուր վրայ քաշելով:



Բ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀՈՎՀԱՆՆԵԼ

Այդ խայտառակ դէպքը պատահած օրը... Կլա-  
սիքական գիմնազիոնի երրորդ գասարանում վեր-  
ջին դասն էր գերմաներէն լեզուից, որ աւանդում  
էր ուսուցիչ Հովհանսէնը: Հովհանսէնը ծեր մարդ  
էր և չափազանց բարի բնաւորութեան տէր: Երի-  
տասարդ հասակում նա զրկուելով իւր երկու զա-  
ւակներից՝ գէպի նրանց ունեցած սէրը փոխազրել էր  
օտար երեխաներին: Նա կարծես ստեղծուած էր  
յատկապէս ուսուցիչ լինելու համար. Հոգով սրտով  
նուիրուած էր իւր կոչման: Նրա համար լաւ ու  
վաս երեխայ չկար. ամենքին էլ միատեսակ անկեղ-  
ծութեամբ սիրում էր. աշակերտներն էլ փոխա-  
զարծաբար նրան էին սիրում: Ծոլլը, աշխատասէ-  
ոլը, ընդունակը, անընդունակը նրա համար միւնոյն  
էր. ամենքի մտերիմ բարեկամն էր՝ ամեն ըոսէ

պատրաստ նրանց օգնելու թէ խօսքով, թէ դոր-  
ծով և թէ խորհուրդներով։ Աշակերտաները համող-  
ուած էին այդ բանում։

Այն բոլոր գպրացները ուր պարապում էր ծե-  
ռունի գերմանացին, իւր արտն էր համարում, որի  
վրայ դուրս էին եկել նորաբողբոջ ծիլերը. Հովհան-  
սէնը իւր բոլոր ոչժը գործ էր գնում, որ այդ ծի-  
լերը որոմնի չփոխուեն, այլ արժանի լինեն այն  
գերազանց կոչման, որ բարձրից վիճակուած է նր-  
անց վայելելու տիեզերքի վրայ։

Սակայն մի բան ամենքին անհասկանալի էր  
մնում, թէ ինչո՞ւ ուսուցիչ Հովհանսէնը՝ չնայած  
իւր ահազին եկամուտին՝ շատ համեստ է ապրում  
և հաղիւ հազ է կարողանում իւր ամենօրեալ ծախ-  
սերը ծածկել։ Թէ ի՞նչ էր անում նա իւր փողերը,  
ոչոք զդիտէր։ Միայն դիմնաղիօնի տեսուչները,  
որտեղ պարապում էր Հովհանսէնը, ենթադրում  
էին, որ երբ ծրարով փող էր ստացւում «Անյալ-  
աց» որևէ չքաւոր աշակերտի տալիք թօշակը,  
այդ երեկի Հովհանսէնից է։ Այդպիսով «Անյալաց»  
միշտ մնում էր անյալու նա սաստիկ չէր սիրում,  
երբ հարցնում էին, թէ ի՞նչ է անում իւր փողերը։

— Շահով եմ տալիս, պատասխանում էր ծե-  
ռունին, որպէսզի վերջ դնէ խօսակցութեանը։

Իհարկէ նրան լաւ ճանաչողներից ոչոք չէր  
հաւատում այդ բանին, բայց յետոյ եղան մարդիկ,

որոնք այդ հանաքով ասած խօսքերը հալած իւղի  
տեղ ընդունելով՝ ծերունի գերմանացուն համարում  
էին, «վաշխառու»։ Թէև ոչոք չէր կարող ցոլց  
տալ նրա զոհերից գոնէ մէկին։

Ահա այդ պատկառելի ծերունուն պատահեց  
այն անսպասելի և գպրոցին անվայել դիպուածը։

Երբ վերջին գասն սկսուեց, Հովհանսէնն շտա-  
պեց մատւ Գ գասարան։ Աշակերտները դիմաւորե-  
ցին նրան իրանց սովորական ուրախ աղմուկով։  
Ամեն մէկը որեւէ հարց կամ խնդիր ունէր իւր սի-  
րելի ուսուցչին ասելու։

Հովհանսէնը ամենքին ևս մի կերպ բաւարա-  
րութիւն տալուց յետոյ, վերջ տուեց խօսակցու-  
թեանը. գասարանում լոռութիւն տիրեց։ Ուսուցի-  
չը երկու աշակերտի կանչեց դրատախտակի մօտ և  
սկսեց այդ օրուայ դասը հարցնել։ Նա ինքնարա-  
ւականութեամբ ժպտում էր. երեսում էր որ զոհ  
էր նրանց պատասխաններից։ Յետոյ ինքն սկսեց  
բացատրութիւններ տալ։ Այդպիսով ժամանակն ան-  
ցաւ աննկատելի։ Երբ ուսուցիչը ժամացոյցին նա-  
յեց, տեսաւ որ ընդամենը չորս ըոպէ էր մնում  
դասը վերջանալուն։

— Երեխալը, այսօր բաւական աշխատեցինք,  
Հիմա պէտք է ծեղ նոր դաս տամ։ Այսօր... (այդ  
խօսքն ասելիս բարձրացաւ ամբիօն ու իւր տեղը բըռ-  
նեց). այսօր շարունակեց նա, դուք ինձ մխիթարե-

ցիք. եթէ ձեր Գ դասարանը միշտ այսպէս հանգիստ մնալ, ձեր Հովհանսէնը բախտաւոր կրղղայ իրան.. Վերջին խօսքը ասած - չասած ամբողջ մարմնով թեքուեց ձախ կողմի վրայ և աթոռի հետ միասին վայր ընկաւ ամբիօնից: Խեղճն այնպէս ուժգին դիպաւ զրատախտակին, որ նրան էլ վայր դցեց և մնաց ահազին ծանրութեան տակ:

Այդ անսպասելի դիպուածից աշակերտները սկզբում բան չհասկացան, կարծես խելքները կորցրին. յետոյ աղմուկ ու իրարանցում ընկաւ, շատերն սկսեցին լաց լինել: Աշակերտներից միքանիւր մօտ վաղեցին, զրատախտակը վերցրին և ի՞նչ տեսնեն.— իրանց սիրելի ուսուցիչը՝ դունաթափ աչքերը փակ, անշարժ ընկած է յատակի վրայ:

Աշակերտներից մէկը վաղեց շրի, միւսն էլ իրանց դաստիարակին կանչելու: Դպրոցի ծառայ Պօղոսն էլ դասարան էր մտել, բայց շփոթուած կանգնած էր և չգիտէր ի՞նչ անելիքը:

— Ի՞նչ է պատահել, նետի պէս ներս ընկնելով հարցրեց դաստիարակը:

— Պարոն վարժապետը ուշաթափուել է, պատասխանեց Պօղոսը:

Անմիջապէս երկուսով վերցրին դեռ ևս ուշաթափ ծերունուն՝ ծառան ոտներից, իսկ դաստիարակը թեւերից և դասարանից դուրս տարան:



Երկուսով վերցրին ուշաթափ ծերունուն՝ ծառան մաներից, իսկ դաստիարակը թեւելից:

— Ա՛խր, այս ի՞նչպէս պատահէց, ինչու վայր  
ընկաւ, հարցրեց Բելկովը:

Աշակերտները իրանց գիտցածը պատճեցին:  
Յետով Պօղոսը կամաց ասաց նրան, թէ ինքը նա-  
յելով աթոռը նկատել է, որ նրա ոտք կիսով չափ  
ազոցած է:



Գ

#### Գ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Տեսչի դուրս դնալուց յետով, աշակերտները  
շրջապատեցին իրանց դաստիարակին և սկսեցին  
խնդրել որ ճիշտն ասէ, թէ ի՞նչպէս է պ. Հովհան-  
սէնի առողջութիւնը. արդեօք կենդանի՞ է նա:

— Ինչ որ տեսուչն ասաց, ես էլ նոյնը պի-  
տի կրկնեմ, որովհետեւ աւելի չգիտեմ, պատասխա-  
նեց Բելկովը:

Այս ասելով նա ընդհանուր հայեացը ձգեց դա-  
սարանի վրայ և տեսաւ որ երեսունեօթ աշա-  
կերտից միայն երկուսն էին մնացել իրանց տեղը  
նստած. զրանցից մէկը կաղ էր և փայտերի օգնու-  
թեամբ էր ման գալիս, ուստի և դասամիջոցներին  
էլ աշխատում էր դասարանում մնալ. իսկ միւսը  
մոմին աղջանունով, մի վերին աստիճանի չար ա-  
շակերտ, որ վարքից միշտ երեք էր ստանում. սա-

կայն ուսուցիչները խնայում էին նրան, չէին արձակում դպրոցից, որովհետև շատ ընդունակ տղայ էր, ենթապրելով որ տարիքի հետ միասին կարելի է բնաւորութիւնն էլ փոխէ և ուղղուի:

Ուսուցչի հայեացքը ակամայ կանդ առաւ Ֆո-  
մինի վրայ, որ շատ հանգիստ նստած էր իւր տե-  
ղում և մինչև անդամ հաց էր ուտում: «Արգեօք  
սա չէ լանդաւորր», մտածեց դաստիարակը.

— Այդ ի՞նչ ես անում, Ֆոմին, գոռաց թէլ-կովը:

Ինչպէս տեսնում էք՝ հայ եմ ուտում,  
այ. Բէկիկով:

— Զե՞ս կարող քիչ համբերել, ասաց ուսուցիչը հազիւ իրան զսպելով:

— Ել ինչու սպասել, ալ. Բէլիով, զարմացած  
հարցը եց Փոսինը. ալ. տեսուչը երեք ժամ պատճեց  
դասարանը. կրնշանակէ ժամը 5<sup>1</sup>/<sub>2</sub>-ին մեղ կարձա-  
կեն. իսկ որովհետեւ ես հեռու եմ ապրում, <sup>3/4</sup> ժամ  
ճանապարհ պէտք է գնամ, ուրեմն եօթներորդ ժա-  
մին տուն կրչասնեմ և որպէսզի շատ չքաղցեմ,  
վհուեցի ուտել մօտս եղած հացը:

Թոմինը թէև հայր պաշել էր և կանգնած,  
քաղաքավարի էր խօսում, բայց և այնպէս մի տե-  
սակ՝ կոպտութիւն էր Նկատուում նրա խօսելու եղա-  
նակի մէջ։ Ուսուցիչն այդ նկատեց և ատելութիւն  
զգաց պէպի ալիք աղան։



*S. 1000* — *1000*

Փոսմինը առանց շփոթուելու մօտեցաւ ուսուց-  
չին և ուղիղ նրա դիմացը կանդնեց:

— Թողմին, չես կարող մեղ ասել՝ ով սղոցեց  
պ. Հովհանսէնի աթոռը:

— Ես ո՞րտեղից կարող եմ գիտենալ, հանգիստ պատասխանեց նա, ես այստեղ սովորում եմ, բայց պահապանի պաշտօն չեմ կատարում:

— Ես քեզ դիմեցի նրա համար, որ դու բոլոր ժամանակ լուռ էիր, մինչդեռ ընկերներդ աշխատում են թէ իրանց արդարացնել և թէ պ. Հովհաննեսի համար այնպէս ցաւում են:

Սակայն ես ի՞նչ կարող եմ խօսել, նոյն հանգստութեամբ շարունակեց աշակերտը. Եթէ դիտենայի՛ կը յայտնէի և աւելորդ երեք ժամ չէի նստի այստեղ:

Միւս աշակերտները ուշադրութեամբ լսում  
էին նրանց խօսակցութիւնը. թէև առաջին անգամը  
չէր, որ ֆոմինը այդպէս համարձակ վէճի էր ըրու-  
նւում ուսուցչի հետ, բայց այս անգամուայ նրա  
համարձակութիւնը զգուելի թուաց ընկերներին.  
իսկ խօսելու հանդիսատ ձեռ՝ համարեա թէ յան-  
ցանք: «Զի՞նի՞ թէ սա է սարսափելի չարութիւն գոր-  
ծողը» ամենքի գլխում ծագեց այդ միտքը:


Բայց ոչ մէկը չկարողացաւ բացարձնել յավա-

նել իւր կասկածը: Յանցանքն այնքան մեծ էր, որ  
առանց որոշ փաստ ունենալու չէր կարելի մէկին  
կամ միւսին մեղադրել. մանաւանդ որ յանցաւորն  
անշուշտ պիտի արծակուէր դպրոցից. այդ բանը  
լաւ հսսկանալով ամենքն էլ զգուշութեամբ լսում  
էին:

Ուսուցիչն ուզում էր խօսքը շարունակել, որ  
դուռը յանկարծ բայցուեց և ներս եկաւ զպրոցի  
վերատեսուչը տեսչի հետ միասին: Վերատեսուչը  
յալտնի էր որպէս խիստ մանկավարժ և միւնոյն  
ժամանակ շատ բարի մարդ. նա անկեղծօրէն սի-  
րում էր երեխաներին և իւր կեանքը նուիրած էր  
սուրբ գործին—նրանց կրթութեանը:

Աշակերտները նրան տեսնելով մի ակնթար-  
թում զնացին իրանց տեղերը. միայն ֆոմինը մնաց  
առաջուաց նման անշարժ կանգնած, մինչև որ դաս-  
տիարակը հրամայեց նրան գնալ իւր տեղը:

— Երեխակը, խօսեց վերատեսուչը. ձեզանից  
մէկը մեծ չարութիւն է կատարել. թէ ով է նա,  
— առ այժմ յալտնի չէ. բայց դուք ինքներդ էլ լաւ  
գիտէք, որ ոչ մի չար գործ անպատիժ չի մնում և  
վաղ թէ ուշ յանցաւորը բռնւում է: Մի օր նրա  
խիզնը կըզարթնէ և աւելի սարսափելի բան չկայ,  
քան խղճի ձայնը. այն ներքին ձայնը, որ նախա-  
տում է մարդուա՛ իւր կատարած չարիքի համար:  
Աչ մի ոյժ չի կարող նրան լռեցնել, և ես նախա-



Աշակերտները զնացին տեղերը. Փոմինը մնաց կանգնած.

պէս խղճում եմ նրան, ով լանցաւոր է այսօրուայտիսուր անցքի մէջ: Մենք վճռեցինք լանցաւորին չորսնել. ի՞նչ կարիք կայ, քանի որ ինքը կրյալանուի. վերջապէս ինչու ամենքդ չարչարուէք մէկի պատճառով: Ես հաւատացած եմ, որ ձեզանից ոչոք չգիտէ թէ ով է մեղաւորը. այդ գիտէ միայն մէկը ձեր միջից, որին խղճալով՝ ես վերջին անգամ առաջարկում եմ որ խոստովանուի, ինչպէս վայել է ամեն մի ազնիւ մարդու: Իշարկէ նա կրպատժուի. աւելի լաւ է մարդ ուրիշից պատժուի, քան ունենալ այնպիսի սարսափելի վրէժինդիր, ինչպիսին է խիղճը... Ուրեմն, երեխայք, ասացէք՝ ով արաւ:

Դարձեալ տիրեց գերեզմանական լոռւթիւն: Վերատեսուչը դառնութեամբ զլուխը թափ տուեց և յետոյ շարունակեց:

— Պարոն հովհանսէնը չկարողանալով ձեզ նոր դաս տալ, ահա զրել է թէ ինչ պիտի սովորէք հետեւալ անգամուայ համար. զրեցէք... այնուհետեւ դուք ամենքդ կարձակուէք. բայց լաւ միտները պահեցէք, ինչ որ ես խօսեցի խղճի տանշանքի մասին:

Այս ասելով նա մի տոմսակ յանձնեց թէլկովին, իսկ ինքը տեսչի հետ դուրս եկաւ դասարանից:


Թէլկովը հովհանսէնի տոմսակից իմացաւ, որ

նա տուն հասնելուն պէս ուշըի դալով՝ իսկոյն մտաբերել է, որ նոր դաս չի տուել և շտապել է տոմսակ ուղարկել գիմնազիօն: Նա իրան շատ լաւ է զգում, իսկ այն գէպը համարում է մի դժբախտ պատահմունք: Բարի ծերունին չէր մոռացել և այն երկու աշակերտի անունները լիշել, որոնք այդ մամանակ դաս էին պատասխանում և խնդրում էր, որ նրանց հինգեր նշանակեն:

Ուսուցիչը բարձր ծալնով էր կարդում սոմսակը նա շատ յուղուած էր և ձայնը դողում էր. նա միայն այն ժամանակ հանդստացաւ, երբ միքանի աշակերտի աչքերում արտասուք նկատեց: — Երեխայք, հասկացածք, ասայ նա. Հիմա գնացէք ձեր տները, խաղացէք, զուարճացէք. ձեզանից 36 հոգի խաղաղ հոգով կը լինին, բայց վայերեսունեօթներորդին:

Միքանի ըոպէից յետոյ դասարանը դատարկուեց:





Դ

## ՀԻՒՍՆԴԻ ՄՕՏ

Աշակերտները երկու խմբի բաժանուած գնացին զանազան կողմերով։ Նրանք խօսում էին օրուայ անցքի մասին։

— Տղէ՛րք, այսպէս հանդիսա, ամեն օրուայ նման տուն գնալ չի կարելի. ով կարող է, թող դայ գնանք պ. Հովհանսէնին տեսութեան, ասաց խմբից մէկը։

Միւսները ուրախութեամբ համաձայնուեցին, թէև Հովհանսէնը բաւական հեռու էր ապրում։

Երբ այդ խումբը մօտեցաւ իրանց սիրելի ուսուցչի բնակարանին, տեսան որ միւս խումբն էլ դիմացի փողոցից է գալիս նոյն նպաստակով։

Երբ երկու խումբը միացաւ, տեսան որ 36 հոգի են, միայն Ֆոմինը չկար իրանց մէջ։

— Երեսունեօթներորդը չկայ մեր մէջ, նկատեց աշակերտներից մինը։

Այդ նկատողութիւնը ամենքի վրայ ճնշող աղդեցութիւն ունեցաւ։

— Տղէ՛րք, հիմա ժամանակ չէ այդ մասին երկար խորհելու, առարկեց մի ուրիշը, աւելի լուէ մեր միջից միքանի հոգի ընտրենք և իրու պատգամաւորներ ուղարկենք պ. Հովհանսէնի մօտ, ապա թէ ոչ այսպէս ահազին խմբով անյարմար է գնալ հիւանդի մօտ։

Այդ առաջարկը առանց վիճաբանութեան ընդունուեց և շտապով իրանց միջից չորս աշակերտ ընտրելով՝ ճանապարհ դրին, իսկ իրանք մտան մօտակայ եկեղեցու բակը սպասելու նրանց վերադրծին։

«Պատգամաւորները» միքանի ըոպէից յետոյ արդէն կանգնած էին իրանց սիրելի ուսուցչի դրբան մօտ, նրանցից մէկը անհամարժակ սկսեց զանգակը քաշել։

Դուռը բաց արաւ տիկին Հովհանսէնը, որ զուրեկան դէմքով մի պառաւ կին էր. նա սիրով ներս հրաւիրեց աշակերտներին։

Հովհանսէնն այնքան փոխուել էր, որ աղաները մնացին զարմացած. երեսին գոյն չէր մնացել, աչքերը խորն էին ընկել, զլուխը փաթաթուած էր թաց երեսսրբիչներով։

Երեխաններին տեսնելով՝ ծերունու աչքերը ուրախութիւնից փայլեցին. նա մոռացաւ իւր թուլութիւնը, բարձրացաւ նստեց մահճակալի մէջ՝ յենուելով բարձերին:

— Շատ ուրախ եմ, իմ սիրելիք, խօսեց նա, որ չմոռացաք ծերունի վարժապետին թշուառութեան մէջ. շատ ուրախ եմ: Նստեցէք խնդրեմ և պատմեցէք. չէ՞ որ դուք ականատես եիք. ախր այդ ինչպէս եղաւ, որ փայլ ընկայ:


— Ա.թոռի ոտք սղոցած է եղել, միամտաբար խօսեց մէկը, չնկատելով որ ընկերները նշաններով արգելում էին:

— Ի՞նչպէս թէ սղոցած, ի՞նչ ես ասում, զարմացած հարցրեց ուսուցիչը, բայց տեսնելով որ նրանք լուռ են, չեն ուզում կամ չեն համարձակւում պարզ խօսել, նորից շարունակեց.—դուք մի բան ծածկում էք ինձանից, երեխայք. մի՛ չարչարէք ինձ, պատմեցէք՝ ինչ որ դիտէք:

Քանի որ մէկը սխալմամբ բերանից խօսք թրցրեց, այլևս չէր կարելի լուել և նրանցից մէկը միառմի պատմեց ամեն բան, ինչպէս որ պատահել էր:

Ծեր ուսուցիչը ուշադրութեամբ լսեց բոլոր պատմութիւնը և փոքր լուռթիւնից յետոյ ասաց.

— Դէհ, երեխայք, եթէ, ինչպէս պատմեցիք, բոլորը ճիշտ է, այդ շատ չար ու անվայել վարմունք է. բայց և այնպէս ես հաւատացած եմ, որ



Ծերունու աչքերը փայլեցին, բարձրացաւ նստեց յենուելով բարձերին:

ալդ անողը չի նախատեսել իւր չարագործութեան հետեանքը: Մի բան միայն ինձ անախորժ է, որ նա մի խոստովանուել իւր մեղքը: Ի՞նչ անենք, ով չէ մեղանչում, բայց մեղանչողը պէտք է խոստովանուէ: Ես շատ կուգէի իմանալ, թէ ով է ալդ չարագործութեան հեղինակը, որպէսզի երբ նրա խիղճը զարթնի ու նրան տանջել սկսէ, կարողանալի նրան հանգստացնել, թեթեացնել նրա հողին: Յանցանքը կարելի է մոռանալ. թող նստուած ներէ նրան, ինչպէս ես ներում եմ:

Դեռ էլի երկար կրխօսէին, եթէ ուսուցիչ Քէկովը չգար և չարձակէր աշակերտներին. նա էլ եկել էր հիւանդին տեսութեան:

— Գնայէք, երեխայք, ասաց նա, առանց այն էլ շատ էք ուշացել, ձեր մնողները անհանդիստ կրլինեն ձեզ համար:

Աշակերտները մնաս բարով ասացին ուսուցիչներին և դուրս գալով սենեակից՝ ուղերուեցին դէպի եկեղեցու բակը, ուր միւս ընկերները անհամբեր նրանց էին սպասում: Տեղեկանալով հիւանդի զրութեան մասին՝ ամենքն էլ շտապով ցրուեցին դէպի իրանց տները, որովհետեւ արդէն հինգերորդ ժամն էր:



Ե

ՍԱՐԳՍԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՖՈՄԻՆ ԱՆՑՈՆԸ

Սարգսեան Գրիգորը երրորդ դասարանի առաջին աշակերտն էր. բայցի օրինակելի վարք ու բարք ունենալուց, նա շատ ընդունակ էր, ընկերասէր և միշտ պատրաստ թուլերին օդնելու:

Գրիգորն ու Անտօնը իրար մօտիկ էին ապրում. երկուան էլ որբ էին, բայց տարբեր հանգամանքներում: Գրիգորն ապրում էր իւր հարուստ հօրեղբօր ընտանիքում, որտեղ թէւ իրանք տղէտ լինելով՝ ուշազրութիւն չէին դարձնում նրա կրթութեան վրայ, սակայն սիրում էին նրան, հոգոքաշում նրա ուսման և յարմարութիւնների մասին:

Հիմա ալս բարի տղայի խելք ու միտքը զբաղուած էր իւր ընկերով: Նա համարեա թէ համոզուած էր, որ ալդ օրուայ տխուր դէպքի հերոսը Անտօնն է. շատ բանով արդէն ապացուցուեց: Բայց

մի բան չէր կարողանում հասկանալ, թէ արդեօք  
ի՞նչն ստիպեց Անտօնին այնպէս անարդ վարուելու:  
Նա թէե շատ մտածեց, բայց չկարողացաւ մի որոշ  
եղրակացութեան գալ: Նրան յայտնի չէր Անտօնենց  
ընտանէկան հանգամանքները:

Ֆոմինը մի բացառիկ օրինակ էր իւր ընտա-  
նեկան պայմանների տեսակէտով: Նրա ծնողները  
խորթ էին: Հարազատ հայրը նրա ծնուելուց յե-  
տոյ իսկոյն վախճանուել էր. մայրն ամուսնացել էր  
ուրիշ մարդու հետ, բայց նա էլ էր շուտով վախ-  
ճանուել, թողնելով երկու տարեկան երեխային  
խորթ հօր խնամքին Խորթ հայրը ուրիշ կին ու-  
ղեց և երկուսով սկսեցին վայելել երեխայի ծնողնե-  
րից թողած ահագին հարստութիւնը: Խորթ ծնող-  
ները սկզբում ուշադրութիւն էին դարձնում երե-  
խայի վրայ, լաւ հազցնում, լաւ կերակրում և նոյն  
իսկ երես տալիս նրան, կարծելով թէ այդ էլ մի  
բարիք է իրանց կողմից: Երեխայի մագերը, որ իբ-  
րև գեղեցկութեան համար չէին կարում, ան-  
նոռնի երկարացել էին և շատ անգամ աղջկայ նր-  
ման հիւսում էին: Փոմինը երեխաների հետ խաղա-  
լիս՝ ամեն անգամ դրգուում էր իւր մագերի պատ-  
ճառով. որովհետեւ չարաճի տղաները նրան հան-  
գիստ չէին տալիս, շարունակ չարացնում էին նրան  
աղջիկ, աղջիկ ձայն տալով: Շատ անգամ մեծերն  
լէ նրան աղջկայ տեղ էին ընդունում: Խեղճը շատ

էր զայրանում, իրան սաստիկ մնշուած էր զգում,  
բայց ոչ մի կերպ չէր կարողանում իւր դրութիւնը  
փոխել. որովհետեւ նրա խորթ մայրը մի կամակոր  
կին լինելով՝ երբէք չէր զիշանում ուրիշի կարծի-  
քին կամ ցանկութեանը: Այսպիսով երեխայի զրլ-  
խում զարթնեց նրա հասակի համար մի սարսափե-  
լի միտք, թէ «իւր շուրջը ամենքը նրան թշնա-  
մի են»:

Անտօնի խորթ ծնողները հարուստ ընտանիք  
հաշուելով՝ շատ էին զբաղուած հիւր գնալով և  
հիւր ընդունելով, այնպէս որ շատ անգամ մոռաց-  
ւում էր օտար երեխան և Անտօնը մնում էր ծա-  
ռաների խնամքին: Իսկ երբ մայրը իւր երեխանե-  
րըն ունեցաւ, բոլորովին անուշագիր թողեց Անտօ-  
նին, որի մանկանոցը հիմա խոհանոցի փոխուեց և  
իւր բոլոր ժամանակը ծառաների հետ էր անց կա-  
ցընում:

Հասկանալի է թէ ի՞նչ կարող էր սովորել մատ-  
ղաշ երեխան բոլորովին անկիրթ ու տգէտ ժառա-  
ներից... Անտօնը մի փոքր յետոյ այն էլ իմացաւ,  
որ իւր խորթ ծնողները ապրում էին նրա հաշուով,  
այսինքն՝ նրա հարազատ ծնողներից թողած հա-  
րսաւութիւնով, բայց ի՞նչ կարող էր անել. միայն  
նրա սրտում չարութեան սերմերը աւելի ու աւելի  
էին ածում:

Վերջապէս նրանց ուրախ և փարթած կեան-

Քրն էլ վերջ ունեցաւ: Նրանք կարծում էին թէ  
անսպառ կրինի իրանց այդ ապօրինի ձեռք բերած  
հարստութիւնը, բայց որքան էլ շատ լինի հարրս-  
տութիւնը՝ մի օր կրհատնի, եթէ միայն ծախսում  
է ու ոչ մի աղբիւրից չի աւելանում:

Անտօնի խորթ հայրը ուշ խելքի եկաւ. տան  
ծախսերը քչազրեց, ինքն էլ սկսեց աշխատել. վեր-  
շապէս տղային էլ խղճաց և ընդունել տուեց գիմ-  
նալիօնի պատրաստական դասարանը: Հայրը տու-  
շն տարին մի կերպ վճարեց նրա ուսման վարձը.  
իսկ հետեւ ատարիները, երբ իւր աշխատանքով  
հազիւ կարողանում էր ընտանիքի առօրեալ ծախ-  
սերը հոգալ, այլևս ոչ մի կոպէկ չէր մնում վրհա-  
րելու գիմնալիօնին: Անտօնի համար մինչեւ հիմա  
հանելուկ էր մնում, թէ ինչու իրան չեն արձակում  
դպրոցից ուսման վարձը չվճարելու պատճառով:



### ԵՐԵՍՈՒԽԵԹՆԵՐՈՒԴԻԼ

Այդ օրը Գրիգորը շտապով ճաշեց և գնաց  
Անտօնին որոնելու. նա գիտէր որտեղ կարող էր  
գտնել ընկերոջը: Քաղաքից գուրս մի լիճ կար որ  
շրջապատուած էր խիտ անտառով: Անտօնը սովո-  
րութիւն ունէր գնալ այնտեղ և մի խուլ տեղ նստել,  
ուր ոչ ոք չէր կարող խանգարել նրա առանձնութիւնը:  
Շուրջը լուսութիւն էր տիրում, երբեմն միայն տերենե-  
րի թեթև սօսափիւնն էր լսում: Գրիգորը ընկերոջը  
գտաւ լիի ափին խոտերի վրայ տարածուած. ինքն էլ  
գնաց մօտ նստեց, բայց Անտօնը բոլորովին չփոխեց  
իւր դիրքը և այդպէս լուս անցաւ միքանի բոպէ:

Գրիգորը առաջինն ընդհատեց լուսութիւնը:  
— Լսիր, Անտօն, չէ՞որ դու արեցիր:  
— Ի՞նչ:  
— Դու սղոցեցիր աթոռի ոտք:

— Քեզ ինչ:

— Ինչպէս թէ ինձ ի՞նչ, Անտօն. չէ ո՞ր այդ վատ, անարդ և անվայել վարմունք էր:

— Հեռացիր ալստեղից և կամ ես կերթամ. ոչ մի տեղ հանգիստ չեն տալիս: Ի՞նչ ես ուզում ինձանից:

— Ես ոչինչ չեմ ուզում, Անտօն, միայն ընկերաբար խօսում եմ հետդ: Ասա՞ ինչո՞ւ արիր այդ բանը:

— Դու լաւ քննիչ կարող ես լինել, հեղաբար նկատեց Անտօնը:

Գրիգորը վիրաւորուեց այդ անտեղի պատասխանից և միքանի ըոպէ լուռ մնալուց յետոյ խօսեց:

— Դու իզուր այնպէս շատպեցիր տուն, Անտօն. մենք ամենքս 36 հոգով գնացինք պ. Հովհանսին ալցելու:

— Յետո՞յ:

— Յետոյ... նստեցինք, խօսեցինք այս օրուայդէպքի մասին. և կարող ես երեւակայել, թէ ի՞նչ էր նրա վերջին խօսքը՝ «թող Աստուած ներէ յանցաւորին, ինչպէս ես ներում եմ նրան»: Յետոյ աւելացրեց, որ ինքը կուզէր իմանալ, թէ ով էր այդ չարութիւնն անողը, որպէսզի, երբ նրա խիղճը կրղարթնէ և կրսկու նրան տանջել, ինքը կարողանայ նրան հանգստացնել, նրա հոգեկան տանջանքը թէթեացնել:

*Պայմանագիր*

— Մի՛թէ նա ալդպէս ասաց, յուզուած հարցրեց Անտօնը:

— Ալո՞, ճիշտ այդպէս: Բայց դու այն ասա, ինչո՞ւ արիր այդպիսի բան, Անտօն, նորից հարցըրեց Գրիգորը աւելի մեղմ:

— Թէ ինչո՞ւ՝ այդ մասին յետոյ. բայց դու առաջ իմացիր թէ ի՞նչպէս եղաւ. լսի՛ր, պատմեմ:

— Յիշո՞ւմ ես, անցեալ շաբթին որ Շապոշնիկեանին վայր գցեցի և նրա քթից արիւն գնաց. դրա համար ինձ պատժեցին՝ երկու ժամ արգելարանում (կարցեր) նստեցնելով: Ես սաստիկ զարդացած կի և որպէսզի սիրտս մի կերպ հովացնեմ, մտածեցի մի բան փչացնել. իսկ այնտեղ փշացնելու շատ բան կար: Ես նայեցի դէս ու դէն, մի փոքրիկ սրդոց գտայ, որի վրայ շատ ուրախացայ. Էլ երկար չմտածեցի, վերցորի մի աթոռ ու սկսեցի ոտք սրդոցել. բայց ուզիղն ասած՝ աշխատելու ժամանակ ես միշտ Պօղոսին ունեի աչքի առաջ, մտածում էի թէ հէնց որ նա վրան կընսատի, իսկոյն վայր կընկնի և միւս օրը մեղ կրպատմէ թէ ինչպէս բան պատահեց իրան: Մի խօսքով երկու ժամը մի ըոպէի նման անցաւ. այս անդամ շատ գոհ մնացի իմ արգելարանից: Անցաւ միքանի օր. միտքս փոխեցի. ի՞նչ մեծ բան է Պօղոսի վայր ընկնելն ու վերկենալը, որսում եմ մեծ մարդկանց որսամ. շատ մտածեցի, մեր բոլոր ուսուցիչներին մտքովս նրս-

տեղրի այն աթոռի վրայ, վերջը գերմանացուն  
ընտրեցի:

— Ինչու անպատճառ նրան, մեղմ հարցրեց  
Գրիգոր:

— Ապա ինչու են ասում, որ նա բարի է,  
իսկի էլ բարի չէ, այլ ժլատ ու անպիտան է, ա-  
սում էն՝ որ նա շահով փող է տալիս, իսկ ինքը  
միշտ աղքատ է ապրում: Մուրացկանին նա եր-  
բէք ողորմութիւն չի տալիս:

— Բայց դու սրտեղից զիտես ալդ բաները:

— Ես ամեն բան դիտեմ: Քանի անդամ տե-  
սել եմ, որ նա աղքատին փոխանակ ողորմութիւն  
տալու, սկսել է նրան բարողել, թէ այդպէս լաւ  
չէ, քեզ համար ինքդ պէտք է աշխատես և այս:  
Ահա այսքան վրէժ ունէի և լուծեցի: Դու լիշտում  
ես գերմաներէնից առաջ ինչ դաս ունէինք:

— Մարմնամարզութիւն:

— Հէնց այն մարմնամարզութեան դասին ես  
մի կերպ դուրս ծլկուեցի և շտապեցի աթոռները  
փոխել. մեր գասարանում եղածը տարայ արգելա-  
րանը, իսկ այնտեղից ոտք սղսցածը բերի նրա տե-  
ղը: Նրա հախն էր:

— Սակայն նա քեզ ներեց:

— Ես չ'մ ուզում նրա ներումը. ամենքին  
կարող ես ասել. միւնոյն է զիմնազիօնում ինձ չեն  
պահելու. այս չինի պատճառը, թօշակ չտալու

պատճառով կարծակեն: Ո՞չ, ես ատում եմ ամեն-  
քին, քեզ էլ եմ ատում. գնա, հեռացի՛ր այստեղից,  
ոչոք ինձ հարկաւոր չէ...

— Լսիր, Անտօն:


— Ոչի՞նչ չեմ ուզում լսել. ամենքդ էլ ինձ  
թշնամի էք. կատաղած խօսում էր Անտօնը:

Արտասուբը նրան խեղդում էր. ոաստիկ յուզ-  
մունքից ծոռացութեան մէջ լնկնելով՝ միքանի ըո-  
պէ երեսի վրայ պառկած մնաց խոտերի մէջ:

Գրիգորը իրան չկորցրեց, թէև ակամայ, բայց  
սկսեց ընկերոց հետ բաղցրութեամբ խօսել, հան-  
դրստացնել նրան. մինչև անդամ նրան ուղեկցեց  
մինչև տուն:

Իսկ միւս առաւօտ, ինչպէս միշտ, միասին  
գնացին դպրոց:





Է

## ԱԶՔԻՑ ԸՆԿԱԾԲ

Միւս օրը գ դասարանում առաջին դասը գաղղիերէն էր: Ուսուցիչ պ. Պտիզարը մտաւ դասարան. աշակերտները սովորական աղօթքն ասացին ու նստեցին իրանց տեղերում: Ուսուցիչը նախքան նստելը՝ վերցրեց աթոռը, շուռ տուեց ու սկսեց լաւ գննել:

— Մեր աթոռները, ասացնա, շատ խախուտ են, այնպէս չէ՞. Հիմա երկիւղալի է նրանց վրայ նստելլ:

— Միամիտ կացէք, պ. Պտիզար, մենք նայել ենք, խօսեց աշակերտներից մէկը:

Յետոյ ուսուցիչը ցուցակը բաց արաւ ու հարցըց:

— Այսօր ո՞վ չի եկել:

— Սարգսեան ու Թոմին չկան, պատասխանեց օրապահը:

Այդ ըոպէին երկուսն էլ ներս մտան և որով-

հետև նրանք երբէք չէին ուշանում, այս անգամ ներուեց նրանց:

Ուսուցիչը ամենից առաջ Թոմինին կանչեց դասհարցնելու. բայց նրա հէնց առաջին պատասխանից նկատեց, որ նա դասը չէ իմանում և արհամարանքով ասաց.

— Դնա տեղդ, բեղ միաւոր եմ գնելու, որովհետև երբէք չես պատրաստում դասդ:

— Դրեցէք ինչ որ կամենում էք, կոպիտ պատասխանեց Փոմինը:

Այդ պատասխանը աւելի զայրացրեց դիւրագրդիո գաղղիացուն և առանց ոչինչ ասելու երկար նկատողութիւն դրեց ցուցակում:

Հետեւել գասամիջոցին Թոմինը նկատեց, որ ընկերներից ոչ մէկը չի ուզում նրա հետ խաղալ. միքանի անգամ փորձեց սրան կամ նրան մօտենալ, բայց ամենքն էլ խուսափում էին նրանից: Նա լաւ հասկացաւ պատճառը և երկրորդ դասամիջոցին այլ ևս չաշխատեց ոչ մի ընկերոջ մօտենալ:

Այդ օրը խեղճ տղայի բանը թարսուել էր: Երկրորդ դասը լատին լեզուից էր. ուսուցիչը փոխանակ տուած դասը հարցնելու, անցած դասերից հարցրեց. այն էլ՝ բերականութեան անգիր արած կանոնները: Թոմինին էլ միքանի հարց տուաւ, բայց նա ոչ մէկին չկարողացաւ պատասխանել: Մի երկրորդ միաւոր էլ ստացաւ:

Երրորդ դասին նոյնը կրկնուեց. յունարէն լեզուի ուսուցիչն էլ նրան միաւոր դրեց և առանձին նկատողութիւն՝ նրա մշտական անուշադրութեան համար:

Այնուհետև մեծ դասամիջոցն էր, որի վերջը ուրախ լուր տարածուեց թէ պ. Հովհանսէնն եկել է դպրոց:

Բարի ծերունին թէև իրան դեռ ևս թոյլ էր զգում, բայց եկել էր, որովհետև անհրաժեշտ էր իւր ներկալութիւնը այդ օրը կայանալիք ժողովում, ուր հերթական զիսաւոր հարցերից մէկը Անտօն Ֆոմինի գործի բննութիւնը պիտի լինէր:

Պ. Հովհանսէնի գաղուց մի երկու րոպէից յետոյ սկսուեց չորրորդ դասը. աշակերտները իրանց խաղերն ու վիճաբանութիւնները թողած՝ շտապեցին մտնել դասարանները: Գ. դասարանում կրօնի դաս էր լինելու. մտաւ տէր Յովհաննէսը և դասաւութիւնն սկսուեց: Ի միջի այլոց նա կանչեց և ֆոմինին դասը հարցնելու. բայց Ֆոմինն ի՞նչ կարող էր պատասխանել. նոյն իսկ եթէ պատրաստած էլ լինէր այդ օրուայ դասը, այնքան անտխորժութիւններից ու գրգռուելուց յետոյ զիտցածն էլ կրօնուանար: Հէսց այդ միջոցին կրօնուսուցը նրկատեց, որ մատեանը չկայ ամբիօնի վրայ, ուստի և ֆոմինին ուղարկեց ուսուցչանոցից բերելու:



Ը

ՈՒՍՈՒՑՉԱՆՈՑԻ ԴՐԱՆ ՄՕՏ

Անտօնը դասարանից դուրս գալով՝ ժանրաբալ ու մտամոլոր գնում էր դէպի ուսուցչանոցը: Այդ օրուայ այնքան անախորժութիւնները խեղզելու չափ ճնշում էին նրան. նա՝ որ մինչև հիմա աշխատել էր յոյց չտալ, այժմ արդէն նրա դէմքի արտայալութիւնից պարզ նկատւում էր, թէ ինչ էր կատարելում նրա ներսը: Նա լաւ հասկանում էր, որ մի միայն գիմնազիոնը կարող էր նրան մարդ դարձնել, հասարակութեան մէջ մի որոշ դիրք տալ: Եւ յանկարծ նրա յոյսը քարուքանդ էր լինում: Նրա սիրոց սաստիկ վշտացաւ ու տիրեց և դէպի մարդկանց ունեցած օխը աւելի վառուեց:

Բայց տարօրինակն այն էր, որ իւր դժբախտութեան միակ պատճառը համարում էր Հովհաննէնին: Այդ բարի ծերունին նրա աչքում իւր ա-

մենաոխերիմ թշնամին էր և ատում էր նրան, ինչպէս իւր խորթ հօրն ու մօրը: Իսկ թէ ինչու— Փոմինը այդ մասին մտածել անդամ չէր ուզում:

Փոմինը՝ ալսպէս դառը մտածմունքների մէջ խորասուզուած՝ մօտեցաւ ուսուցանոցին, որի դուռը քիչ բաց էր և ներսից ուսուցիչների տաք-տաք վիճաբանութիւնն էր լսում: Այնտեղ էին վերապէսուչը, տեսուչը, միւս ուսուցիչները և ի միջի այլոց հովհանսէնր: Տղան կանգ առաւ դրան մօտ և սկսեց ականջ դնել:

— Ո՞չ, պ. հովհանսէն, զրգուած խօսում էր ուսուցիչներից մէկը, այդպիսի աշակերտին անկարելի է պահել դպրոցում: Ենթադրենք թէ երեկուայ դէպքին նա մասնակից չէ, նայեցէք նրա այսօրուայ վարմունքին. մի օրուայ մէջ այսքան միաւորներ ու նկատողութիւններ ստանալը խայտակութիւն է:

Փոմինը լսում էր այս բոլորը. նրա մտքովն էլ չէր անցնում, որ ծածուկ ականջ դնելը ամօթու յանցանք է. նա միայն մի բան դիտէր, այն է որ այնտեղ վճռւում էր իւր նակատագիրը:

— Թոյլ տուէք ինձ խօսելու, պարոնայք. Թոյլ ձայնով խօսեց հովհանսէնը. դուք մոռանում էք որ Փոմինը մի զարմանալի լիշողութիւն ունեցող տրդայ է. Եթէ նա իրան մի փոքր ուղղի՝ կարող է դպրոցի զարդը լինել:



Փոմինը լսում էր թոյլու:

— Ես համաձայն եմ ձեզ հետ, հաստատեց  
վերաբեռություն:

— Բայց ի՞նչ են նշանակում այսօրուայ միաւորները. նկատեց ուսուցիչներից մէկը:

— Այդ շատ հասկանալի է, կրկին խօսեց Հովհաննելու մասինը. Երէկուայ դժբախտ դէպքը վերազրում էնք Թոմինին, թէև ոչ մի հաստատ ապացոյց չկայ: Ուսուցիչները դասարան մտնելով՝ պէտք է որ վատ տրամադրուած լինէին դէպի նա: Մենք ամենքո լաւ գիտենք նրա թողլ կողմքը, որ նա անկարող է մի բան անդիր անել, կամ բառացի կրկնել ուսուցչի ասածները, այսպէս է կազմակերպուած այն տղայի ուղեղը. իսկ եթէ հարկաւոր լինի մի բան պատճել, կամ դասի վերաբերեալ որևէ դատողութիւն անել՝ դժուար թէ մէկ ուրիշը կարողանայ այնպէս պարզ, հասկանալի արտայացտել իւր միտքը և յիշել բոլոր մանրամասնութիւնները, ինչպէս որ նաև Այսօր ուսուցիչները անշուշտ վատ տրամադրուած ինելով դէպի այն դժբախտ տղան, երեկի իրանց ովորական հարցնելու ձեւն էլ փոխեցին և աշակեղ միաւորներ շարելու պատճառը:

Բայց մի՛ մոռանաք, ընդդիմախօսեց զա-  
սարանի դաստիարակը, որ այդ տղան վարքից ե-  
րեւ ունի, նա ոչ միայն դպրոցի զարդը չէ, այլ կա-  
տարեալ խայտառակութիւնը:

— Ո՞չ ո՞չ, սիրելիս, այդպէս մի՛ խօսէք, բնդ-

Հատեց նրան Տովչանսէնը, դուք անշռւշտ ուրիշ  
բան կը մտածում:

— Ես միայն այն եմ մտածում, որ Թոմինը  
մի անուղղելի աշակերտ է, և իմ կարծիքով նրան  
պէտք է հեռացնել դպրոցից:

— Ի նկատի ունեցէք և նրա ընտանեկան հանգամանքները, խօսեց վերատեսուչը. չէ՞ որ նրա խորթ ծնողները վատնել են տղայի բոլոր ունեցած չունեցածը. Հիմա էլ ոչ մի հոգացող չունի. ահա երկու տարի է նրանք ուսման թօշակ չեն տալիս և նոյն իսկ չեն էլ հարցնում, թէ այդ ի՞նչպէս է որ իրանց տղային չեն արձակում դպրոցից:

— Երևի մէկը վճարում է, որ նա մինչեւ հիմա մնում է դպրոցում, նկատեց ուսուցիչներից մէկը:

— Այս, վճարում են, անորոշ պատասխանեց վերատեսուչը:

= βωμη ήγειρησις

— Ուղիղն ասած՝ չփառեմ. ահա երկու տարի է ինչ ճշտութեամբ ստացւում է այդ տղայի թօշակը սի «անյալտից», բայցի դրանից կլի չըրս աշակերտի համար. և որ գլխաւորն է. այնքան աղնիւ հոգու տեր է այդ «անյալտը», որ նրա խնդրանոք ստացականները ուղարկում ենք փոստը՝ ցպահանց:

— Թողնենք այս խօսակցութիւնը, ընդմիշեց

Հովհանսէնը. աշխարհիս վրայ շատ կան ալղպիսի  
թուլութեան տէր մարդիկ, որոնք շպրտում են փո-  
ղերը... նրանց մասին օրէնք չի գրուած:

Այս վերջին խօսքերը լսելով՝ ֆոմինի ունեցած  
ատելութիւնը դէպի գերմանացուն աւելի կրկնա-  
պատկուեց: Ինչ որ լսեց ուսուցչանոցից, նրա հա-  
մար նորութիւն էր: Նա հիմա հասկացաւ թէ ին-  
չու չեն արձակում իրան գպրոցից: Բայց ովէ և այն  
«անյայտը», որ վճարում է և՛ ուրիշների համար.  
պէտք է որ շատ բարի մարդ լինի և այս անպի-  
տան գերմանացին նրա այդ բարեգործութիւնը թու-  
լութիւն է անուանում: Ո՞չ, եթէ լինում էին բռ-  
պէներ, որ ես ափսոսում էի արածիս վրայ, հիմա  
մինչեւ անգամ հպարտանում եմ, նրան համան էր:  
Իսկ եթէ կարելի լինէր իմանալ թէ ովէ և այն «ան-  
յայտը», Անտօնը նրա ստրուկը, նրա հաւատարիմ  
շունը կրդառնար, որպէսզի մի կերպ իւր երախ-  
տիքը յայտնէր նրան:

Անտօնը դարձեալ հնտեեալ խօսքերը լսեց:

— Պարոնայք, միմիայն ինձ համար, խօսում  
էր Հովհանսէնը, ի պատիւ իմ ծերութեան խղճա-  
ցէք այն տղային... ես երաշխաւոր եմ, որ նա  
կուղուի:

— Պարոնայք, լաւ է որ արձակումը յետա-  
ձրգենք, առաջարկեց վերատեսուչը. եթէ ֆոմինի  
անյայտ բարերարը այս օրերին չի ուղարկի նրա

ուսման թօշակը այն ժամանակ արձակումն անխու-  
սափելի կրլինի. և ալղպիսով գոնէ նրա ապագան  
չի խորտակուի... ինդղում եմ ձեզ:

Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, զգացուած  
արտասանեց գերմանացին, դուք ինձ բախտաւո-  
րացրիք:

Ֆոմինն ալեւս չուզեց ականջ գնել... նա շատ  
կուզէր, որ Հովհանսէնը նրան հակառակ խօսէր,  
որպէսզի ունեցած ատելութիւնը աւելի սասակա-  
նար... թէե այսպէս էլ ծերունին ստորացաւ նրա  
աչքում: Տղան համարում էր նրան կեղծաւոր, որ  
բարութեան աստառի տակ թաղցնում էր ինչ-որ  
գաղտնի նպատակ:

«Ուզում է բարեսիրա ծեանալ», ինքն իրան  
մտմտալով տղան սկսեց գուռը ծեծել:

— Տէր հայրն ինձ ուղարկեց մատեանի հա-  
մար, հազիւ իւր յուզմունքը զսպելով ասաց նա:  
Ուսուցիչները չին կարող ենթալրել, որ նա

յանդկնութիւն արած լինէր, այն է դրան մօտ կան-  
գնած, ականջ դրած լինէր:

Անտօնը մատեանն ստանալով՝ մոռացաւ նոյն-  
իսկ սովորական գլուխ-տալը և շտապ բալերով վե-  
րադարձաւ դասարան:

Միքանի ըոսէից յետոյ չորրորդ դասն էլ վեր-  
չացաւ. իսկ հինգերորդը-չունեցան ուսուցչի բացա-  
կալութեան պատճառով:

Փոսմինը, ինչպէս այդ օրը միշտ առանձնացած էր  
եղել, հիմա էլ մենակ շտապով գնում էր դէպի առւն  
— Անտօն, ես քեզ հետ եմ, հաղիւ նրան հաս-  
նելով ասաց Գրիգորը:

— Հեռու ինձանից, գոռաց նա, ես ոչոքի չեմ  
ուզում, հրէշներ, անիմուածներ... ես ձեզ ա-  
տում եմ:

Եւ նա սկսեց վագել, ընկերից փախչել:



X

թ.

### ՕՐՅԱՍՏԱԿԱՆ ԺԱՄԸՆ

Այն օրից Անտօնը կարծես վերածնուեց. նրան  
չէր կարելի ճանաչել, կարծես ուրիշ տղայ լինէր.  
ոչ մօտենում էր ընկերներին, ոչ մասնակցում նրանց  
խաղերին. Ամեն ինչ կարող էր մոռացուել, եթէ նա  
ինքը առիթ չտար լիշեցնելու իւր տխուր պատ-  
մութիւնը:

Երբ հովհանսէնը բոլորովին կազդուրուելուց  
յետոյ եկաւ գպրոց պարապելու, հէնց որ մտաւ  
դ գասարանը, Անտօնն խսկոյն մօտեցաւ նրան և  
յայտնեց որ ինքը այլևս չի կամենում գերմաններէն  
սովորել:

— Ինչու, զարմացած հարցրեց ուսուցիչը,  
միթէ այնքան դժուար է քեզ համար այդ առար-  
կան:

— Ոչ ամենեին դժուար չէ, պատասխանեց նա:

— Ապա ինչու չես ուզում սովորել:  
— Որովհետեւ Բիսմարկն էր խօսում այդ  
լեզուով:

— Բիսմարկը քեզ ի՞նչ է արել, Ֆոմին, տայ  
Աստուած, որ ամեն մի ազգ որքան կարելի է շատ  
ունենայ Բիսմարկի նման զաւակներ: Սակայն ես  
չեմ ստիպում, դու իրաւունք ունես օտար լեզու-  
ներից մէկն ու մէկը չսովորել, իսկ այդ քո ճա-  
շակի բանն է, նստիր տեղի իսկ մենք, երեխայք,  
շարունակենք:

Ամբողջ դասի ընթացքում Ֆոմինն այնպէս էր  
ձեւանում, իբր թէ չի հետաքրքրում, բայց մեծ  
ուշադրութեամբ լսում էր և հետեւալ դասը նա  
արդէն գիտէր աւելի լաւ, բան միւս ամենալնդու-  
նակ աշակերտները:

Հետեւալ դասամիջոցին Սարգսեանը մօտեցաւ  
նրան ու ասաց.

— Անտօն, ուզում ես քեզ մօտ նստեմ, ես  
կրխնդրեմ պ. Բէլկովից և նա անշռւշտ թոյլ կրաայ:  
— Տարկաւոր չէ:

— Ինչու Անտօն:

— Ես ողորմութիւն չեմ ընդունում:

— Այսուղ ողորմութեան բան չկայ, Անտօն.  
Վերջապէս ես իրաւունք ունեմ ուզածս տեղը նրս-  
տելու և կրնուեմ քեզ մօտ:

— Իսկ ես չեմ ուզում, լսում ես, չեմ ու-

զում: Եթէ դու ինձ մօտ նստես, ես տեղս կր-  
փոխեմ:

Ֆոմինն այնպէս վճռողաբար մերժեց ընկերոջ  
առաջարկը, որ Սարդսեանն այդ մասին այլևս ը-  
խօսեց: Կամաց-կամաց միւս ընկերներն էլ հանգիստ  
թողեցին նրան. ոչ մէկը չէր մօտենում, չէր խօ-  
սում հետը:

Ֆոմինն այդ բանի համար շատ գոհ էր. հիմա  
նա կարող էր միայն իւր մտածմունքներին նուիր-  
ուել: Բայց չկարծէք, թէ նա մտածում էր այն բա-  
նի մասին, որ մի՛ գուցէ ինքը շուտով թողնէ դրա-  
բացը, ոչ այդ մարդի հետ արդէն հաշտուել էր: Նա  
մտածում էր այն անլայտ բարերարի մասին, որ  
երկու տարի շարունակ վճարել էր նրա ուսման  
վարձը:

«Ո՞վ է նա և ինչու է այդպէս անում», մըտ-  
մըտում էր տղան. բայց զուր էր չարչարւում, ոչ մի  
կերպ չէր կարողանում այդ հարցերին պատասխանել:

Անյայտ բարերարը նրա երեակայութեան մէջ  
ներկայանում էր մի գեղեցիկ չահէլ մարդ, շէկ մա-  
զերով (ինչպէս ինքն ունէր), նիշար ու գունատ  
դէմքով (ինչպէս ինքը): Մանկութեան ժամանակ  
շատ նեղութիւններ կրած. անպատճառ խորթ  
ծնողներ ունեցած: Եւ փորձով իմանալով՝ թէ  
որքան ծանր է որբի դրութիւնը, հիմա ինքը հա-  
րուստ լինելով՝ վճուել է օդնել բոլոր որբերին:

Այսպէս մտածելով Անտօնը շատ սիրեց իւր բարերարին և վճռեց որ երբ ինքն էլ մեծանայ, անպատճառ նրա օրինակին հետեւ:

Այսպէս անց էին կենում օրերը օրերի ետեից: Ֆոմինը կարծես ուղղուեց: Գոնէ ոչ մի ուսուցչից նկատողութիւն չէր ստանում և տուած դասերն էլ երբեմն պատրաստում էր:

Ուսուցիչներն այդ բացատրում էին նրանով, որ իրու թէ Ֆոմինը նկատելով որ նրա վրայ այդպիսի կասկած կայ, առժամանակ հանդարտուել է. իսկ նրա մշտական պաշտպան գերմանացին նրկատում էր, որ նա ուղղակի սկսել է ուղղուել. «Զէ՞ որ շատ օրինակներ գիտենք, ասում էր նա, որ ծոյլ և փչացած երեխաները ժամանակի ընթացքում փոխուել են և մինչեւ անդամ երեկի մարդ դարձել»: Հովհանսէնի շարունակ պաշտպանութիւնն այն հետեւանքն ունեցաւ, որ միւս ուսուցիչներն էլ Ֆոմինի մասին ունեցած կարծիքը փոխեցին դեպի լաւը:

Վերջապէս հասաւ այն սարսափելի օրը, երբ վերատեսուչը բոլոր դասարանները պիտի մտնէր ու կարդար վարքի թուանշանները և այն աշակերտների ազգանունները, որոնք ուսման վարձը չէին վճարել. այդպիսիներին իրանց կանոնադրութեան համաձայն երկու շաբաթ ժամանակ էր տրւում, իսկ եթէ դարձեալ չէին բերում՝ արձակւում էին դպրոցից:

Ֆոմինն անհամբեր սպասում էր այն օրհասական ժամին. նա մտածում էր, որ այն անյայտ բարերարը երեւի իմացած կըլինի իւր վատ վարմունքի մասին և այլեւ ուղարկած չի լինի նրա ուսման վարձը:

Ահա դ դասարանի դուռը յանկարծ բայցուեց և ներս մտաւ վերատեսուչը. նա բարեւեց աշխարհագրութեան ուսուցչին և բաց արաւ ծեռքի մատեանը: Ֆոմինը շատ շփոթուեց (մինչեւ հիմա այդ չէր պատահել) և մինչեւ անդամ զլուխը պառյուն եկաւ:

Բոլոր ազգանունները կարդալուց յետով, վերատեսուչը վերջը կարդաց՝ Ֆոմին Անտօն չորսից հանած (4—):

— Ֆոմին, աւելացրեց նա, դու պ. Հովհանսէնին ևս պարտական, որ վարքիդ թուանշանն աւելացաւ, նա քեզ շատ էր պաշտպանում մանկավարժաւ, նա քեզ շատ էր պարողացաւ միւսներին էլ համոզել, որ դու սկսել ես ուղղուել:

Ֆոմինը յանկարծ սկսեց հեկեկալ թոթովելով՝

— Զեմ ուղում, հարկաւոր չէ:


— Ի՞նչը չէ հարկաւոր, Ֆոմին, հարցրեց վերատեսուչը:

— Պաշտպանութիւն, ողորմութիւն:

— Այս, դու խելառ տղայ, անկեզծ յաւակ-ցութեամբ զլուխը թափ տուեց վերատեսուչը.

այստեղ ի՞նչ ողորմութիւն կալ, բարի ծերունին  
հոգս է քաշում քո մասին, իսկ դու... Բայց թող-  
նենք այս: Երեխալը, ձեղանից միքանիսը դեռ չեն  
բերել ուսման վարձը. Եթէ երկու շաբաթուայ բն-  
թացքում չբերեն մեր կանոնադրութեան զօրու-  
թեամբ՝ կարձակուեն դպրոցից:

Եւ նա բարձրածայն կարգաց հինգ աշակերտի  
աղդանունները, որոնց մէջ Թոմինը չէր լիշուած:



X  
Ժ Ի Ւ Ց

Դժուար է նկարագրել Թոմինի հոգեկան դրու-  
թիւնը. Նա սկզբում չհաւատաց իւր ականջներին.  
այս անգամ էլ չկարգացուեց նրա աղդանունը ար-  
ձակուող աշակերտների շարքում: Այս ի՞նչ բան է.  
դարձեալ այն խորհրդաւոր անյալտն է տուել ան-  
շուշտ: Ի՞նչպէս գտնել այդ մարդուն, որ որպէս  
շնորհակալութիւն իւր ամքողը կեանքը նուիրեր  
նրան: Մինչև հիմա Թոմինն իրան միայնակ էր զգում  
աշխարհիս վրայ. մինչդեռ հիմա կալ մէկը, որ նրա  
մասին հոգս է քաշում: Այս, եթէ մի կերպ իմա-  
նար այն անյալտի անունը:

Տղան այնպէս էր խորասուզուել իւր մտքերի  
մէջ, որ չէր նկատում, թէ ի՞նչպէս ուսուցիչը նա-  
յում էր նրան. իսկ երբ հարց տուեց, Թոմինը բո-  
լորովին չկարողացաւ պատասխանել:

— Այս բոպէին քեզ գովեցինք, որ իրրեւ թէ

սկսել ես ուղղուել, այն ինչ հիմա ուրիշ բան էմ տեսնում: Դասից այն ժամանակ կարելի է օդուտ ստանալ, երբ բոլոր աշակերտները մտքով հետևեն ուսուցչի հարցերին և իրանց մտքում կուզդեն ընկերների պատասխանների մէջ նկատած սխաները: Թէպէտ ցաւում եմ, բայց ստիպուած եմ նկատողութիւն գրել քո մասին: Դասերից յետոյ կէս ժամ կը մնաս դպրոցում:

Ֆոմինը շատ էլ չախրեց. նա կրկին մտածմունքների մէջ ընկաւ՝ պատկերացնելով իրան այն բռպէն, թէ ինչպէս պիտի գտնի իւր անյալտ բարեկամին և շնորհակալութիւն անէ:

Հետեւալ մեծ դասամիջոցին տղան այնպէս բախտաւոր էր զգում իրան, որ խօսելու պահանջ զգաց ընկերների հետ, բայց չպտնելով իւր մտերիմ ընկերոց Սարգսեանին, էլ չուզեց միւսներին մօտենալ, որովհետեւ իւր դժբախտութեան ժամանակ բացի Սարգսեանից ամենքն էլ երեսը դարձրին նրանից:

Չորրորդ դասը թուաբանութիւն էր, իսկ հինգերորդը՝ պատմութիւն: Ֆոմինին չէր կարելի ճանաչել. այն ծով և անուշաղիր աշակերտը հիմա բոլոր հարցերին հիանալի պատասխաններ էր տալիս: Ուսուցիչները չէին կարողանում իրանց զարմանքը ծածկել: Իսկ պատմութեան ուսուցիչը ուղակի լայտնեց, թէ այնքան զոհ է նրա պատաս-

խաններից, որ այս անգամ հինգ դնել նրան դարձեալ քիչ է համարում:

Բայց և այնպէս ֆոմինը դասերը վերջանալուց յետոյ մնաց զպրոցում. նա ոչ միայն չէր ցաւում իրան պատմելու համար, այլ և ուրախ էր, որ կարող էր կէս ժամ աւելի մնալ այն պատերի մէջ, ուր այնքան անարդանք ու անպատութիւն էր կրել:

Բոլոր դասարաններն արձակուած էին. ուսուցիչներից ոմանք արդէն ցրուել էին, ոմանք դեռ նստած էին ուսուցչանոցում: Գ դասարանի դաստիարակը ֆոմինի պատմառով դասարանումն էր մնացել, բայց նրան էլ մի գործով ուսուցչանոց կանչեցին:

Ֆոմինը մենակ մնալով՝ սկսեց զարմացած նայել իւր շուրջը. կարծես առաջին անգամն էր տեսնում այն բոլորը: Նա վեր կացաւ տեղից, ման եկաւ դասարանում, ամեն ինչ զննեց, ամեն բանով հիացաւ. յետոյ ամբիօնի վրայ բարձրանալով նրսուեց այնտեղ: Դրանով էլ չբաւականացաւ. նա դուրս եկաւ իւր դասարանից և մտաւ հարեւան—երկրորդ դասարանը. այնտեղ էլ մի առանձին հետաքրքրութեամբ աչքի անցրեց ամեն բան. ամբիօն բարձրացաւ, նստեց ուսուցչի աթոռի վրայ, շուրջը նայեց և ինքնազոհ մտածեց. «Մեր գ դասարանը աւելի լաւ է, ամբիօնն էլ այնտեղ աւելի բարձր է և մաքուր»:

Ամբիօնից իջնելիս՝ նա մի սկ բան նկատեց.



Ամբիոնից իջնելիս՝ նա մի սկ բան նկատեց:

վերցրեց, տեսաւ մի կաշուէ հին բսակ՝ լիքը գանազան թղթերով։

«Երեխ ուսուցիչներից մէկինը կրլինի», մտածեց տղան և այն է՝ ուզում էր տանել, դաստիարակին յանձնել, որ մէկ էլ յանկարծ մտաբերեց, թէ այդ դասարանում վերջին դասը գերմաներէն էր։

«Զլինի՞ թէ այս բսակը գերմանացուն է պատկանում. այո՛, այո՛, հէնց նո կլինի կորցրած»։ Այս նոր միտքը նրա մտավորութիւնը փոխեց։

«Երեխ սրա մէջ են այն բոլոր թշուառների ստացականները, որոնց այդ ագահ ծերուկը սարդի նման իւր նանկն է դցել, որից ոչ մի կերպ չեն կարողանում աղատուել։ Այս լաւ եղաւ. հիմա ե՞ս դիտեմ անելիքս... Որքան մարդկանց կազատեմ։

Ֆոմինը շտապեց իւր դասարանը վերադառնալ. դասած բսակը խնամքով պահեց զրքերի հետ։ Դաստիարակին էլ շուտով եկաւ և ժամացոյցին նայելով ասաց.

— Գնա՛, ֆոմին, ես քեզ հինգ բոպէ առաջ եմ արձակում։

Ամբողջ ճանապարհին ֆոմինը մտածմունքի մէջ էր. «Վերջապէս վրէժս կրլուծեմ, մտմառում էր նա. թող մարդիկ ինձ յանցաւոր համարեն, այդ միենոյն է. ես համոզուած եմ, որ այս յանցանքի հետեւանքն այն կրլինի, որ շատ շատերը կրբախտաւորուեն և ինձանից շնորհակալ կրլինեն այնպէս, ինչպէս ես եմ շնորհակալ իմ անլայտ բարերարից։



ԺԱ

### ԼՃԻ ԱՓԻՆ

Շատ սակաւ էր պատահում, որ Սարգսեան Դրիգորը դասը բաց թողնէր. հիւանդութիւնը չէր կարող պատճառ լինել, որովհետեւ նա առողջ տղայ էր. միայն ընտանեկան հանգամանքներից երբեմն ստիպուած էր լինում տանը մնալ:

Այդ օրը, երբ զիմնազիոնում վարքի թուանշաններն էին կարդում, Դրիգորը բացակայ էր, որովհետեւ իւր հօրեղբօր կնոշ ծնունդն էր: Օրը շաբաթ էր. նրանք միասին զնացին եկեղեցի, յետոյ երբ տուն վերադարձան, նախաճաշեցին այնուհետեւ հօրեղբայրն ու կինը ուրիշ տեղ գնացին դորձով: Դրիգորը տանը մնալով՝ երկար ժամանակ նրատաճ կարգում էր. երբ ծանծրացաւ ժամացուցին նայեց, տեսաւ 3<sup>1/2</sup> էր:

«Անտօնը հիմա եկած կրլինի, մտածեց տղան,


գնամ իմանամ՝ երկուշաբթի օրուայ համար ի՞նչ դասեր է տրուած, բացի դրանից կարելի է թէ յաշողուի և նա աւելի մտերմաբար վերաբերուի ինձ»:

Բարեսիրտ տղան անկեղծ խղճում էր ընկերոջը. նա հասկանում էր, որ Անտօնը դժուար դրութեան մէջ է դանւում, ցանկանում էր օգնել, թեթևացնել նրա տանշանքները, բայց չգիտէր ինչպէս մօտենար, ինչպէս թափանցէր նրա հոգու ներսը:

«Նա տանը չի լինի, մտածեց Գրեգորը, դուք է իմ գնալը. անպատճառ լծի ափին կրլինի, իւր սիրած տեղը»:

Եւ առանց մի բոլէ կորցնելու գնաց դէպի լիճը: Դեռ օր շատ կար. աշնան պայծառ արևի ոչ տաք ճառագայթները փոռուած էին գետնին: Գրիգորը գնում էր ուրախ սուլելով. նա մտածում էր զամ ահա որտեղ որ է կրգանէ ընկերոջը և այս անթէ ահա որտեղ որ է կրգանէ ընկերոջը և այս զամ կրյաջողուի նրա հետ անկեղծօրէն խօսել:

Գրիգորն արդէն անտառումն էր և շուտով պիտի հասնէր լծի ափին, Անտօնի սիրած տեղը: Եւ մէկ էլ յանկարծ իւր ետեկից լսեց չորացած ճղների ճարճատիւն: Մէկը վազում էր, և ինչպէս ճարկում էր, առանց ուշադրութիւն դարձնելու ճարկում էր, առանց ուշադրութիւն դարձնելու ճարկում էր: Գրիգորը կանգ առաւ, յետ նայեց նապարհի վրայ: Գրիգորը կանգ առաւ, յետ նայեց ատեսաւ որ վազողը Անտօնն է: Բայց ի՞նչ դրութեան մէջ՝ զլխաբաց, առանց վերաբկուի, դէմքը ժերից չանկոռտած, աչքերը կարծես տեղերից պիտից չանկոռտած,



Հասնելուն պէս՝ մէջքից ամուր բռնեց:

աի գուրս ընկնէին: Քրաինքն ու չանկռոտած տեղերից հոսած արիւնը իրար խառնուած՝ առատօրէն թափուում էին երեսից:

Քրիգորը ընկերոջն այդ զրութեան մէջ տեսնէլով՝ գոռաց երկիւղից:

— Անտօն, ի՞նչ է պատահել քեզ, հարցրեց նա և երկու ձեռքով պինդ գրկեց ընկերոջը, որպէսզի արգելէ նրան աւելի առաջ գնալու:

— Թող ինձ, ասաց նա անսովոր խռապածայնով:

— Ո՞չ, չեմ թողնի. ասա՛, ի՞նչ է պատահել քեզ:

— Թող ինձ անիծուած. և Անտօնը բոլոր ուժով խփեց ընկերոջը:

Քրիգորն այդպիսի բանի չեր սպասում. այնպէս ուժով էր հարուածը, որ խեղճ տղան հաղիւ կարողացաւ ոտի վրայ մնալ. բայց շուտով ուշքի կանգնեց, նետի պէս սլացաւ Անտօնի ետեից և հանելուն պէս՝ մէջքից ամուր բռնեց: Երկիւղը նրա ոլքը կրկնապատկեց: Եւ ի՞նչպէս երկիւղ չդպար, քսնի որ իւր աչքի առաջ, միքանի քայլ հեռու մի մաղի չափ էր մնացել, որ սարսափելի դժբախտութիւն տեղի ունենար: Երկու քայլ էր մնում լինց, որ Անտօնը կանգ տռնելով՝ երեսը խաչակնքեց և հէնց այն է՝ ուղում լր իրան զցել լիճը, որ Գրիգորը վրայ հասաւ և բոլոր ուժով գրկեց նրան: Անտօնն աշխատում էր նրանից աղատուել,

բայց Գրիգորը նրանից ուժեղ էր. երկու ընկերների մէջ սարսափելի գօտէմարտ սկսուեց հէնց անդունդի ծալրին: Գրիգորն աշխատում էր անդունդից հնուացնել ընկերոցը, իսկ նա ընդհակառակը դէպի լիճն էր քաշում:

— Թո՞ղ, թո՞ղ ինձ, աղաղակում էր նա. դու ի՞նչ գործ ունես, թո՞ղ ինձ. միւնոյն է չես կարող ինձ արդելք լինել, այստեղից չլինի, մի ուրիշ տեղից կընկնեմ:

— Ո՞չ ոչ, չեմ թողնի, յոզնածութիւնից հազիւ արտասանում էր Գրիգորը. ասա՛, էլի մի նոր բան է պատահել քեզ հետ:

— Քո ի՞նչ գործն է, բաց թող ինձ, ասում եմ:

— Մի՛ աշխատիր աղատուել, չեմ թողնելու. դու էլ գիտես որ ես քեզանից ուժեղ եմ:

Կոխը շարունակւում էր, բայց կուողները տարրեր ուժերի տէր լինելով՝ Անտօնն արդէն ըսկսել էր ուժասպառ լինել. բացի յոզնածութիւնից նրան թուլացրել էր նաև ներքին յուզմունքը. նա զիմադրում էր սակայն ոչ նախկին եռունդով:

Բայց իսկապէս ի՞նչ էր պատահել, ի՞նչն էր ստիպել թշուառ տղային այդպիսի սարսափելի քայլ անելու: Զէ՞ որ դպրոցից մինչև տուն, ամբողջ ճանապարհին նա իրան ուրախ էր զգում. որովհետեւ համոզուած էր որ իւր «թշնամի» գերմանացու ճակատագիրը արդէն իւր ձեռքումն է: Այն միտ-

քը, որ հովհանսէնի պարտապանների ստացագիրներ պիտի պատուտէ մանր կտորների և յետոյ ալրէ, աննկարագրելի հրճուանք էր պատճառում նրան:

Տուն հասնելուն պէս զրքերը մի կողմ շպրտեց և դտած քսակը վերցրեց ու վազեց բանջարանոց, որտեղ ոչոք չէր խանգարի քսակի մէջ եղած թըրդ թերը լաւ նայելու:

Թէև մի ըսպէ նա խղճի խալթ զգաց, մտածելով՝ որ իրաւունք չունի ուրիշի գաղտնիքներն իմանալու, բայց այդ ծալնին ականչ չդրեց, ուստի և չարը յաղթեց բարիի ձայնին և նա բաց արաւ քսակը:

Նա չէր սխալուել. քսակը պատկանում էր հովհանսէնին, որովհետեւ մէջը նրա այցետոմսէրը դտաւ:

Անտօնը բաց արաւ քսակի այն բաժանմունքը, որտեղ շատ թղթեր կալին. սակայն բանից դուրս եկաւ, որ այդ բոլորը քաղաքային լօմբարդում գրաւ գրած իրերի անգորբազիրներ էին: Այդ թղթերի հետ մի տոմսակ էլ գտաւ, որ գրուած էր մօտ ժամանակում: Տոմսակի բովանդակութիւնից տղան իմացաւ, որ հովհանսէնին պաշարեղէն մտակարարողը այլես չէր կամենում պարտքով բան տալ նըրան. պահանջում էր հին պարտքը, հակառակ դէպ քում սպառնում էր գանդատուել:

«Այս ի՞նչ է նշանակում, մտածում էր Անտօնը. այս բոլորից միայն նրա չքաւորութիւնն է երե-

ւում. ապա մեր են պարտապանների ստացագիրներն ու մուրհակները»:

— Ահա, գտայ, գտայ:

Եւ նա միւս բաժնից ուրախ - ուրախ հանեց խնամքով ծալած թղթերի մի փոքր կապոց, որ կապած էր կապոյտ թելով:

Անտօնը այդ կապոցը տեսնելով՝ չարախնդութեամբ ծիծաղեց:


— Ո՞րպիսի քնքշութիւն, տսաց նա, կապոյտ թելով էլ որ կապել է՛. տեսնենք ովքեր են նրա զոհերը:

Թելը կտրեց և հաղիւ մի երկու թուղթ էր կարդացել, որ բոլորը ձեռքից վայր ընկաւ. ինքն էլ նստած տեղից գլորուեց, ապա վեր թռաւ և ինչ որ ձեռքերում ոյժ կար, սկսեց սեղմել զլուխը: Խեղճը բոլորովին գունատուել էր. նա այնպէս էր հեծում, որ աւելի վիրաւորուած զաղանի ոռնոցի էր նմանւում, քան մարդու ծալնի. տղան չոգեց դետնին և ցիրուցան եղած թղթերը հաւաքելով՝ սկսեց մէկ - մէկ կարդար:

Այդ բոլորը զանազան զպրոցներից ստացուած անդորրագիրներ էին ուսման վարձի համար:

Թշուառ տղան զտաւ ծանօթ ձեռքով գրուած մի անգորրագիր «Խոսին Անտօնի»...

Ահա թէ ով էր այն անյախը, որին Անտօնը շիմանալով տնդամ սիրում էր:



Նա այնպէս էր հեծում, որ աւելի վիրաւորուած զաղանի ոռնոցի էր նմանւում:

Մի վայրկեան մտածելուց յետոյ բաց արաւ  
քիչ առաջ կարդացած տոմսակը և իւր անունով  
ստացած անդորրազրի ու նրա ամսաթուերը հա-  
մեմատելով՝ տեսաւ որ տոմսակը մի քանի օր ա-  
ռաջ էր ստացուած։ Անտօնին թւում էր թէ ինքը  
մի սարսափելի երաղի մէջ է։

Մի օտար մարդ իւր իրերը զբաւ է գնում,  
դրկւում է ապատիկ առնելու իրաւունքից անգամ  
և այդ նրա համար միայն, որ ժամանակին վճարէ  
որևէ ֆոմինի ուսման վարձը։ Իսկ ֆոմինը զրա  
փոխարէնն, ի՞նչ է անում, — ամենայն կերպ աշխա-  
տում է վնասել այդ մարդուն։

Այդ բանից յետոյ ֆոմինը կարող էր ապրել.  
ի՞նչ երեսով պիտի նայէր ալ. Հովհանսէնին. ի՞նչպէս  
խոստովանուէր թէ ինչ կերպով կարողացաւ նրա  
գաղանիքն իմանալ։

Այդ հարցերի պատասխանը ֆոմինը գտնում  
էր միայն մահուան մէջ։

Սեւի լաւ է մահը, քան այս խայտառակ  
կեանքը։

Եւ եթէ Սարդսեանը վրայ չ'հասնէր, թշուառ  
աղան խեղդուած կըլինէր։



ԺԲ

### ԱՐՑՈՒԽՆՔ

Հովհանսէնը շատ վշտացած էր իւր կորուս-  
տի համար։ Լօմբարդի անդորրազրերի համար այն-  
քան չէր ցաւում, որովհետեւ բոլորի համարները  
արտադրած ունէր յիշատակարանում։ Նա ցաւում  
էր զպրոցներից ստացած անդորրազրերի համար,  
որ մինչև այդ օրը գալունի մնացած «Անյալոր»,  
հիմա պիտի յալտնուէր։ Նա ման եկաւ բոլոր զբու-  
րոցները, որտեղ ինքը դաս էր տուել այդ օրը,  
բայց ոչ մի աեղ չ'գտաւ իւր կորուստը։

Մութը նոր էր ընկել. Ճեր ամուսինները սե-  
ղանատանը նստած խօսում էին իրանց կորուստի  
մասին։ Պ. Հովհանսէնը շարունակ հառաջում էր,  
իսկ կինը միթթարում էր նրան ասելով՝ թէ զուր  
է այդպէս յուսահատուելը, կարող է պատահէլ որ  
քսակը գտնուի։ Այդ ժամանակ նրանք լսեցին ե-  
րանց գանգակի թողլ ծախնը։

— Երկու զիմնազիստ են Եկել, յանկանում  
են պարոնին տեսնել, յայտնեց աղախինը:

— Հրաւիրիր նրանց իմ առանձնասենեակը,  
ես իսկոյն կը դամ:

Հովհանսէնը շտապով հանեց խալաթը և սեր-  
թուկը հագաւ ու գնաց իւր պարապման սենեակը,  
որտեղ միայն Սարգսեանին դտնելով ասաց.

— Բարեւ, սիրելիս, իսկ ինձ ասացին թէ եր-  
կուսն էք:

— Այս, երկուսն ենք, պ. Հովհանսէն, պա-  
տասխանեց Գրիգորը. Ֆոմինն էլ ահա այստեղ է.  
Նա կամենում է ծեղ հետ խօսել մի շատ լուրջ զոր-  
ծի մասին. ես ծեղ մենակ պիտի թողնեմ. ցտե-  
սութիւն:

— Ինչու ես գնում, կաց մի փոքր ժամանակ.  
Եթէ այստեղ չես ուզում մնալ, գնա՛ սեղանատուն  
կնոշս մօտ. իսկ Ֆոմինը որտեղ է, ես նրան չեմ  
տեսնում:

— Այստեղ եմ, պ. Հովհանսէն, շփոթուած  
ձալն տուեց Անտօնը սենեակի մի մութ անկիւնից:

— Եկ, տեսնեմ, այդ ի՞նչ տեսակ լուրջ զործ  
է, որի մասին ուզում ես մենակ խօսել հետո:

Ինչպէս երեսում էր Սարգսեանը ինքն էլ էր  
յանկանում մնալ մինչեւ նրանց խօսակցութեան  
վերջը, այդ պատճառով առանց աւելորդ նազերի  
գնաց մտաւ ուսուցչի ցոլց տուած սենեակը:

Հէնց որ Գրիգորը դուռը յետ դրեց, Անտօնը  
աւղից վեր թռաւ և ամբողջ մարմնով դողալով  
ձնկաչոք ընկաւ ուսուցչի առաջ:

— Ներեցէք ինձ, հաղիւ արտասանեց նա:

— Ի՞նչ ներեմ, ի՞նչ ես արել ինձ, հարցրեց  
զարմացած ծերունին:

— Դուք արդէն զիտէք. ես սղոցեցի աթոռի  
ոտք, որ դուք վայր ընկաք:

— Է՛հ, ի՞նչ հարկաւոր է այդ մտաքերել. այդ  
բոլորն անցաւ, մոռացուեց:

— Բայց ես չեմ կարող մոռանալ. ես...

— Նախ՝ սիրելիս, վեր կաց, մօտս նստիր,  
այստեղ. այզպէս: Դէհ, հիմա խօսենք:

Բարեսիրած ծերունին աղալի խօսելու ձախից  
հասկացաւ, թէ որքան ծանր պիտի լինէր այդ խօս-  
տավանութիւնը, և շատ խղճաց նրան: Նա նրկա-  
տեց որ այն հեկեկանըը մի բոպէից յետոյ կատա-  
ղած ալիքների նման պիտի սկսէ հօսել նրա տան-  
չուած սրտից:

— Հանգստացիր, դաւակս, հանդստացիր, ա-  
սում էր Հովհանսէնը աղալին զրկելով. խնդրում եմ  
հանգստացիր. ինչ որ եղաւ, եղաւ... հօ զիտես այն  
առածը՝ ով հինը կը մտաքերէ...

— Ոչ, այզպէս մի՛ խօսէք, պ. Հովհանսէն,  
հեկեկալով թոթովում էր Անտօնը. ես չար եմ, ան-  
պիտան եմ. սպանեցէք ինձ, աղալում եմ ծեղ. չ

որ դուք բարի եք, սպանեցէք ինձ... Ես ինքս ինձ պիտի սպանէի, եթէ Սարգսեանը չլինէր... Ո՛չ, ինչպէս ծանր է, սարսափելի է:

Յանկարծ զղային հեկեկանք դուրս թռաւ խեղճ տղայի կրծքից. Նա գահաւորակից վայր ընկաւ ուսուցչի ոտների մօտ և սկսեց անկապ-անկապ պատճել այն բոլորը, ինչ որ անցել էր նրա զլխով՝ սկսած իւր մանկութիւնից:

Ծերունին այլ ևս չէր խանգարում. նա զիտէր որ այդ պատմութիւնը կըթեթևացնէ տղայի սիրար. իսկ նրա գժբախտ կեանքի հետ ինքը արդէն ժանօթ էր: Անտօնը թէս անկապ էր պատմում, բայց բոլորը ճշմարտութիւն էր: Նա պատմելիս ոչ իրան էր խնայում և ոչ ուրիշն էր մեղագրում: Ամեն բան յայտնեց իւր ուսուցչին, ամեն բան, ինչ որ իրան յուղում էր, տանջում էր և կատագեցնում.—թէ իւր ընտանիքի, թէ զպրոցի, թէ իւր մշտական միայնակութեան և թէ իւր թշուառ կեանքի մասին, որ երբէք դգուանք չէր տեսել և ոչ սիրող սիրտ ունեցել իւր մօտ: Պատմեց թէ ինչպէս ականջ էր զրել ուսուցիչների խօսակցութեանը, ինչպէս այն օրից շարունակ մրտածում էր այն «Անյախտի» մասին և երդուել էր որպէս շնորհակալութիւն իւր կեանքը տալ այն միակ մարդուն, որ նրան կարեկցել է:

Հովհանսէնը շատ տխրեց այդ պատմութիւնից:

— Խեղճ տղայ, բացականչեց նա, առանց սիրոյ, առանց զգուանքի: Ո՞, հիմա էլ մի վախենար, ես միշտ քեզ հետ կըլինեմ:

— Դուք, աղտղակեց Անտօնը, դուք: Ո՞չ, զուք էլ ինձ դուրս կանէք այս ըոսէին... Գիտէք ես ի՞նչ արեցի այսօր... ամաչում եմ ասել... Զի՞որ ես զտայ ձեր քսակը և բաց արի նրան:

Ուսուցիչը ցնցուեց:

— Աչա վերցրէք... Ձեր մասին ասում էին, որ դուք ժլատ էք, վաշխառու էք, որ խեղճերից ծծում էք մինչև վերջին կաթլիլը: Երբ ձեր քսակը դատայ, շատ ուրախացայ. կարծում էի թէ այսաւղ կրգանեմ ձեր զոհերի սատրադիրները և կոչնացնեմ, որպէսզի մարդկանց ազատնմ ձեղանից... յանկարծ զրա փօխարէն ի՞նչ եմ աեսնում... չ'մ կարող մարերել... չ'մ կարող ձեր երեսին նայել...: Ես վազեցի դէպի լինը որ խեղդուիմ. և կըխեզդուէի, եթէ Սարգսեանը չպատահէր... Նրան էլ ուզեցի լինը զցել, բայց նա ինձանից ուժեղ էր... Այնուհետեւ չիտե չզիտեմ ինչ պատահեց ինձ հետ. երբ ուշը և կայ, տեսայ որ լձի ափից բաւական հեռու էի նկայ, տեսայ որ լձի ափից բաւական հեռու էի պատկած: Սարգսեանը մօտ էր և հենց նա համազեց ինձ, որ զամ ձեզ մօտ: Աչա ձեր քսակը, ամեն բան մէջն է: Դէ՛հ շուտով դուրս արէք ինձ:

— Սիրելի զաւակս, զգացուած խօսեց մերունին, ինչու ես ալզպէս կարծում. քեզ ինչու ալիսի


դուրս անեմ. մի՞թէ չեմ տեսնում, թէ ինչ բարի սիրտ ունես: Դու ուզում էիր խեղձերին աղատել վաշ-խառուի ճանկերից. ուզում էիր ստացագիրները ոչըն-չացնել: Իմ խելառ աղաս, երբ այդ զիտաւորութեամբ իմ հին քսակս բաց էիր անում, զիտե՞ս ինչ էիր ուզում անել. — դու քեզ զոհում էիր ուրիշների պատճառով: Հասկացիր, դու քեզ չէիր ափսոսում, իսկ բոլորովին անծանօթ մարդկանց ուզում էիր աղատել: Քեզ ոչ թէ պէտքէ դուրս անել, այլ զրկել և համբուրել. ահա, այսպէս: — Դու լաց ես լինում: Լաց, լայ, զաւակս, մի՛ ամաչիր այդ արցունքիցդ. դրանք սուրբ արցունքներ են, որոնցով լուացւում է բիւրեղ-եաց սիրտ բոլոր արատներից: Քո արցունքը տես-նելով՝ ինքս էլ եմ լաց լինում:

Անտօնը զլուխը զրած ծերունու ուսին՝ ան-դուսպ կերպով հեծկլում էր: Այդ վայրկեանները սաստիկ ծանր էին նրա համար և վազուց հաւա-քած արցունքները հիմա առուի նման հոսում էին նրա աչքերից, որով փոքր առ փոքր թեթևութիւն էր զգում:

— Ի՞նչպէս լաւ է, ի՞նչպէս թեթեացայ, շը-շնջում էր աղան:

Հովհանսէնը նոյնպէս լաց էր լինում և ու-սուցի ու աշակերտի արցունքները իրար էին խառնւում:

Տիկին Հովհանսէնն ու Սարգսեանը լացի ձայ-



Անտօնը զլուխը զրած ծերունու ուսին՝ անշուսպ կեր-պով հեծկլում էր:

Նը լսելով՝ գուռոր բաց էին արել և նայում էին նրանց  
վրայ: Տիկինը բան չէր հասկանում: իսկ Գրիգորը  
լաւ իմանալով՝ պատճառը՝ ինքն էլ հեկեկում էր  
նրանց հետ:

— Ի՞նչպէս լաւ է... կրկին անգամ շշնչաց  
Անտօնը, յանկարծ բոլոր մարմնով ցնցուելով՝ յետ  
ընկաւ թախտի վրայ:

Եւ վարդագոյն արիւնը հոսեց նրա բերանից:

Բարեբախտաբար նոյն բոպէին հրաւիրուած բժիշկը յախնեց, որ երկիւղալի բան չկայ. միայն թէ խեղձ տղան դրանից լետոյ բաւական ծանր հիւանդացաւ:

Հովհանսէնը միւս օրը դնաց Անտօնի խորթ  
Ճնողների մօտ և մի փոքր խօսակցութիւնից յե-  
տոյ համաձայնութիւն կալացրին, որ Անտօն Ֆո-  
մինը ցմահ պիտի ապրէ Հովհանսէնի մօտ իբրև  
նրա որդեգիր:

Այդ օրից Անտոնը էլ չբաժանուեց իրան ապաստանող ծերունիներից։ Նրանց անկեղծ սէրն ու զգուանքը բարի ներդործութիւն ունեցան տղայի վրայ։ Անյայտացաւ նրա չարութիւնը, յամառութիւնը, ծածկամտութիւնը և զրանց փոխարինեց քնքութիւնը, ուրախութիւնը և ամեն բարի բանի հետեւը։

Ծեր ամուսինները շատ սիրեցին իրանց հոգեղաւակին:

— Յատուած մեղսնից խլեց երկու զաւակ,  
յաճախ ասում էր Հովհանսէնը, և նրանց փոխա-  
րէն առեց մէկը, որպիսին ցերեկը լապտերով պէ-  
տի որոնէինք: Եթէ ես աթոռից վայր չընկնէի,  
որտեղից կարող էինք այսպիսի լաւ աղայ ունենալ:  
Կրկին անդամ հաստատուեց այն իրողութիւնը,  
թէ ամեն չարիք բարի վախճան է ունենում:

Անտօնը կազմուելու հետ կարծես վերա-  
ծնուեց: Եթի դիմուազիօն գնաց, սկսեց եռանդով  
պարապել և հէնց հետեւեալ կիսամեակին նա դա-  
ստրանում առաջին աշակերտն եղաւ ու այդպէս էլ  
շարունակեց մինչև վերջը:

Աւարտելու օրը վերատեսուչը ոսկէ մեղալ-  
տուեց նրան անուանելով՝ «...զիմնադիօնի ամենա-  
լաւ զարգը»:

Անտօնը նոյնչափ փալլուն աւարտեց և բըժըշ-  
կական Փակուլտէարք Բայց նա չաշխատեց յայտնի  
գերք բռնել հասարակութեան մէջ, այլ իւր ոյժն  
ու զիտութիւնը նուիրեց մերձաւորին ծառայելու  
նպատակին: Նա խեղճերի բժիշկ դառաւ. նրան  
օգնութեան զիմող ոչ մի խեղճ մարդ մերժում չէր  
ստանում:

ԱՀԱ այսպէս զէպի մերձաւորը անսահմա-  
սիրով և կարօտեալին օգնելու անշահասէր ծառա-

յութեամբ հասուցանում էր իւր պարտքը ծեր ու-  
սուցչին, որ նրան վերածնել էր նոր կեանքի հո-  
մար:

Հովհանսէն ամսւսիններին մահը միայն բաժանեց Թոմինից: Բայց Անտօնը մենակ մնալով՝ ամենեւն չփոխուեց, այլ նոյն եռանդով շարունակեց իւր ընտրած՝ թէե ոչ փայլուն բայց սուրբ ասպարէղը:



## ՎՐԵԱԿՆԵՐ

| ՏՊՈՒԱԾԷ |       | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ        |
|---------|-------|--------------------|
| Երես    | 3 առղ | 8 ներ. կը հասկանայ |
| "       | 4 "   | 4 ներ. հենց        |
| "       | 4 "   | 3 ներ. սուտաւ      |
| "       | 5 "   | 5 ներ. Տանրութեան  |
| "       | 5 ..  | 3 ներ. ծա—նր       |
| "       | 8 "   | 1 վեր. Ամօթ-       |
| "       | 9 ..  | 2 ներ. աշխատասէ—որ |
| "       | 10 .. | 4 վեր. գպրոցները   |
| "       | 10 .. | 12 վեր. ինչո՞ւ     |
| "       | 11 .. | 2 վեր. համարում    |
| "       | 11 .. | 1 ներ. այսօր       |
| "       | 12 .. | 13 վեր. ուսուցիչը՝ |
| "       | 12 .. | 13 վեր. գունաթափ   |
| "       | 12 .. | 6 ներ. բնկնե—լով   |
| "       | 16 .. | 11 վեր. ինչպէս     |
| "       | 17 .. | 13 ներ. Աակայն     |
| "       | 17 .. | 2 ներ. գործողը՝    |
| "       | 20 .. | 9 վեր. իհարկէ      |
| "       | 20 .. | 10 վեր. լաւ է մարդ |
| "       | 23 .. | 9 ներ. դրամն       |
| "       | 28 .. | 1 ներ. լէ          |
| "       | 31 .. | 3 վեր. կար         |
| "       | 32 .. | 2 վեր. մը          |
| "       | 32 .. | 8 վեր. Ասաւ        |
| "       | 33 .. | 9 ներ. Պօղոսին     |
| "       | 36 .. | 2 վեր. Գ           |
| "       | 37 .. | 8 ներ. այլ ևս      |
| "       | 39 .. | 1 վեր. ԴԻԱՆ        |
| "       | 39 .. | 5 ներ. մար—դկանց   |
| "       | 40 .. | 9 վեր. դրան        |
| "       | 43 .. | 6 ներ. «անյայտից»  |
| "       | 45 .. | 4 վեր. Ծնորհակալ   |
| "       | 45 .. | 8 ներ. դրան        |
| "       | 47 .. | 7 ներ. Գ           |
| "       | 48 .. | 9 վեր. տեղդ        |

|             |    |            |    |             |                   |
|-------------|----|------------|----|-------------|-------------------|
| <i>Երես</i> | 51 | <i>առղ</i> | 6  | <i>վեր.</i> | դ                 |
| "           | 55 | ;          | 3  | <i>ներ.</i> | դ                 |
| "           | 57 | "          | 8  | <i>վեր.</i> | <i>կլինի</i>      |
| "           | 57 | "          | 13 | <i>ներ.</i> | <i>կազմատեձու</i> |
| "           | 57 | "          | 1  | <i>ներ.</i> | <i>բարերարից:</i> |
| "           | 61 | "          | 12 | <i>վեր.</i> | <i>ինձ</i>        |
| "           | 61 | "          | 10 | <i>ներ.</i> | <i>կանգնեց,</i>   |
| "           | 63 | "          | 4  | <i>ներ.</i> | <i>դէպ—բուժ</i>   |
| "           | 66 | "          | 11 | <i>վեր.</i> | <i>փոխարէնն,</i>  |
| "           | 67 | "          | 8  | <i>ներ.</i> | <i>չ'դառաւ</i>    |
| "           | 68 | "          | 4  | <i>վեր.</i> | <i>կը դամ</i>     |
| "           | 69 | "          | 3  | <i>վեր.</i> | <i>ծնկաշոք</i>    |
| "           | 70 | "          | 2  | <i>վեր.</i> | <i>չ'միներ...</i> |
| "           | 71 | "          | 1  | <i>վեր.</i> | <i>բացականչեց</i> |
| "           | 72 | "          | 9  | <i>վեր.</i> | <i>պէտքէ</i>      |
| "           | 72 | "          | 10 | <i>վեր.</i> | <i>լաց</i>        |
| "           | 75 | "          | 6  | <i>վեր.</i> | <i>չնկնէի,</i>    |

→ 4 < ←

ՀՀ Ազգային գրադարան



NL0392319

3888

